375:378
З-11
1928-29
22764

ՀԱՍԽՀ.
ՊԵՏՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԾՐԱԳՐԵՐ
# ԲԺՇԱԿ IV ԿՈՒՐՍԻ

(1928–29 ակ. տարի)

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԱՊԱԿԵՏԻՊ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բժշկի IV կուրսի ուսման պլանը –
Դասախոսների ցուցակը –
Ծրագրեր – 1. Ֆիզիոթերապիայի կուրս էջ 1
2. Մանկական հիվանդությունների կլինիկա „ 5
3. Աչքի հիվանդությունների կլինիկա „ 8
4. Դատական բժշկագիտություն „ 9
5. Ներքին հիվանդությունների կուրս „ 13
6. Էպիդեմիոլոգիա հիմունքներ „ 25
7. Նյարդապաթոլոգիայի կուրս „ 30
8. Ֆակ. խիրուրգիական կլինիկա ուրոլոգ. „ 46
9. Մանկաբարձա-գինեկոլոգիական կլինիկա „ 48
10. Ռենտգենոլոգիայի կուրս „ 54
11. Ներքին հիվանդությունների կլինիկա „ 57
12. Մաշկի և վեներական հիվանդությունների կլինիկա „ 97
13. Ֆակուլտետային թերապևտիկ կլինիկա „ 108
14. [illegible] „ 58

II

## ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

| № | ԱՌԱՐԿԱ | ԴԱՍԱԽՈՍԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ |
|---|---|---|
| 1. | Ֆիզիոթերապիայի կուրս | Ա. Դավթյան |
| 2. | Մանկական հիվանդութ. կլինիկա | Ն. Գաբրիելյան |
| 3. | Աչքի հիվանդությունն. կլինիկա | Կ. Կամսայան |
| 4. | Դատական բժշկականություն | Յն. Քեկ-Հովսեփյան |
| 5. | Վեներիկ հիվանդությունն. կուրս | Ար. Իսահակյան |
| 6. | Էքսպերիմենտալ հիգիենա | Ս. Բաղդասարյան |
| 7. | Հելմինթոլոգիական կուրս | Յն. Ֆիալանքարյան |
| 8. | Ֆակ. խիրուրգ. կլինիկա ուրոլոգ. | Ն. Ֆիշեկ |
| 9. | Մանկաբարձա-գինեկոլ. կլինիկա | Գ. Արեշյան |
| 10. | Ռենտգենոլոգիայի կուրս | Բ. Ֆանարջյան |
| 11. | Ներքային հիվանդութ. կլինիկա | Ա. Արզումանյան |
| 12. | Մաշկի և վեներ. հիվանդ. կլինիկա | Ա. Գրիգորյան |
| 13. | Ֆակուլտետ. թերապև. կլինիկա | Ա. Մելիք-Ադամյան |
| 14. | Պսիխիատրիա | Ա. Արզումանյան |

## ՈՒՍՄԱՆ ՊԼԱՆ

Բժֆակ IV կուրս 1928-29 ուս. տ.

| | Առարկաներ | I Սեմեստր | | II Սեմեստր | |
|---|---|---|---|---|---|
| | | Տեսակ. ժամ | Գործն. ժամ | Տեսակ. ժամ | Գործն. ժամ |
| 1. | Ֆիզիոթերապիայի կուրս | 1 | 2 | – | – |
| 2. | Մանկական հիվանդ. կլին. | – | – | 3 | 4 |
| 3. | Աչքի հիվանդ. կլինիկա | 2 | 3 | 2 | 3 |
| 4. | Դատական բժշկականութ. | 2 | 2 | 2 | 2 |
| 5. | Վեներիկ հիվանդ. կուրս | – | – | 1 | 2 |
| 6. | Էքսպերիմենտ. հիգիենա | 4 | 4 | 4 | 4 |
| 7. | Հելմինթոլոգ. կուրս | – | – | 1 | 2 |
| 8. | Ֆակ. խիրուրգ. կլինիկա ուրոլ. | 5 | 4 | 5 | 4 |
| 9. | Մանկաբարձա-գինեկ. կլինիկա | 4 | 4 | 4 | 4 |
| 10. | Ռենտգենոլոգ. կուրս | 1 | 2 | – | – |
| 11. | Ներք. հիվանդ. կլինիկա | 4 | 4 | 2 | 2 |
| 12. | Մաշկի և վեներ. հիվ. կլինիկա | 2 | 3 | 2 | 3 |
| 13. | Ֆակուլտ. թերապ. կլինիկա | 5 | 4 | 5 | 4 |
| 14. | Պսիխիատրիա | 2 | 3 | 2 | 3 |
| | | 32 | 35 | 33 | 37 |

# ԾՐԱԳԻՐ

## ՖԻԶԻԿՈ-ԹԵՐԱՊԻԱՅԻ

Ա. Դասախոսություն.

1. Ֆիզիկո-թերապիայի ընդհանուր բնութագիրը: Պատմական ակնարկներ: II. Զանազան ֆիզիքական մեթոդներով բժշկելու ազդեցությունները օրգանիզմի վրա և որանց ֆիզիկո-քիմիական հիմունքները:

Բ. Դասախոսություն.

I Կլիմատոլոգիայի հիմունքները և կլիմաթերապիա:

1. Հագնված մարդու ջերմական հաշվեկշռի ինքնազգայմունքի սահմանները: Նրա խանգարումները և կանոնավորումը:

2. Կլիմայական ազդակներ: Ատմոսֆերայի ճնշումը: Օդի հատկությունները:

3. Քաղաքի և գյուղի կլիման: Ծովային և լեռնային կլիմա: Անապատի կլիմա: Ամառանոցներ. ձմեռանոցներ:

II. Աերոթերապիա.

1. Չհագնված մարդու ջերմական հաշվեկշռի ինքնակգայմունքի սահմանները օդի մեջ:

2. Օդային լողարաններ /վաննաներ/:

Գ. Դասախոսություն.

I. Ֆոտոթերապիա, հելիոթերապիա և ֆինզենո-

թերապիա:

1. Ճառագայթային էներգիայի հասկացողությունը:

2. Լուսաբուժության հիմունքները և լուսաբուժության կարգավորումը:

3. Արևաբուժություն:

4. Էլեկտրական լույսի աղբյուրը, որպես բժշկության միջոց:

ա. Պրոժեկտոր /սովորական աղեղային լամպերի լույս/

բ. Ֆինզեն-Ռեյնի ճրագը:

գ. Ուվիոլ սնդիկային ճրագ և կրոմայերի ճրագ:

դ. Սնդիկ-կվարցային ճրագ /արհեստական լեռնային արև/: Յեսիոնեկի կվարցային ճրագ:

5. Հրավառ էլեկտրական ճրագը /светло-калильная лампа/ որպես բժշկության միջոց:

ա. Էլեկտրական լույսի /հրավառ ճրագների/ ընդհանուր արկղը:

բ. Նույն լույսի իրանի աղեղը /բուրակս/ և մի շարք այլ տեղային գործածության գործիքներ /Մինինի ռեֆլեկտոր և այլն/:

6. Լույսի այլ աղբյուրներ, որպես բժշկության միջոց:

ա. Ացետիլենային ճրագը: բ. Ռոլլյուսի ճրագը:

Դ. Դասախոսություն.

I Մեխանոթերապիա, մասաժ, բժշկական գիմնաստիկա:

1. Մեխանիկական էներգիայի արտադրությունը օրգանիզմի մեջ:

ա. Մկանային աշխատանք և հոգնածություն:

բ. Մկանային աշխատանքի ազդեցությունը ներքին համակարգի, արյան շրջանառության, շնչառության, մարսողության, մաշկի, յերիկամի վրա:

2. Արտաքին շարժական ույժերի ազդեցությունը օրգանիզմի վրա:

3. Մասաժի և բժշկական գիմնաստիկայի հիմունքները:

Ե. Դասախոսություն

I. Ջերմոթերապիա

1. Ջերմական ազդեցությունների ֆիզիկական և ֆիզիոլոգիական ներգործությունները:

II. Հիդրոթերապիա

1. Մարդու ջերմական հաշվեկշռի ինքնակարգավորման պայմանները ջրի մեջ:

2. Ջրի լողարաններ /վաննաներ/, կիսավաննաներ, մասնակի և տեղային վաննաներ: Գազ պարունակող վաննաներ:

3. Դուշ. 4. Քսումներ. 5. Կոմպրեսներ. 6. Հիդրոպատիկ կոմպրեսներ և այլն:

III. Ծովի և գետի լողանքներ:

IV. Ցեխի և ավազի բժշկություն.

1. Ցեխի ծագումը, պահելու, պատրաստելու յեվ գործածու-

[illegible] հիվանդները:

Զ. Դասախոսություն.

I Ելեկտրոթերապիա.

1. Ելեկտր. էներգիայի ներգործության հիմունքները:
2. Ցած լարվածության ելեկտրական հոսեր.
   ա. Գալվանիզացիա. բ. Ֆարադիզացիա.
   գ. Սինուսոիդալ և լեդյուկի հոսեր:

Է Դասախոսություն

I Ելեկտրոթերապիա /շարունակություն/

3. Բարձր լարվածության հոսեր.
   ա. Ֆրանկլինիզացիա. բ. Դ'Արսոնվալիզացիա
4. Դիաթերմիա

Ը. Դասախոսություն

I. Բալնեոթերապիա: Կուրորտներ: Հանքային ջրերի ընդհանուր հատկությունները:

Թ. Դասախոսություն

I Բալնեոթերապիա /շարունակություն/

1. Հանքային ջրերի կլասիֆիկացիայի փորձ.
2. Ինդիֆերենտ և սպեցիֆիկ ջրեր:

Ժ. Դասախոսություն

I. Բալնեոլոգիա /շարունակություն/

ա. Ածխաթթու, հիմնային, կրային ջրեր: Սեղանի աղի ջրեր: Դառն ջրեր:

# ՄԱՆԿԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՆ ՈՒ ԾՐԱԳԻՐԸ

IV կուրսի դասընթացը կրում է նախապատրաստական բնույթ, ուսանողներին ծանոթացնել մանկանց ուսումնասիրության մեթոդոլոգիային, դիագնոստիկային և սիմպտոմատոլոգիայի հետ ու մանկական պաթոլոգիայի հետ: Այս նպատակով տարվում են յերկու կարգի պարապմունքներ:

Ա. Թեորետիկ կուրս մանկան օրգանիզմի առանձնահատկությունների ու այդ հասակին յուրահատուկ հաճախակի հիվանդությանց:

Բ. Գործնական աշխատանքներ ամբուլատոր հիվանդների վրա պրոպեդ-և-տիկ ուղղությամբ:

Այս աշխատանքները տարվում են խմբակներով:

Նվազագույն ժամեր թեորետիկ կուրսի համար հարկավոր են շաբաթական 3 ժամ /յերեք ժամ/:

Նվազագույն ժամեր գործնական աշխատանքների համար, ամեն մի ուսանողի համար հարկավոր է շաբաթական յերկու ժամ: Այսպիսով ուրեմն IV կուրսի ուսանողը շաբաթական 4 ժամ նվիրում է մանկաբուժության ուսումնասիրության:

# ԹԵՄԱՏԻԿ ԿՈՒՐՍԻ ԾՐԱԳԻՐԸ

1. Մանկության շրջանները և նրանց բնութագիրը:
2. Նորմալ նորածին մանկան բնութագիրը:
3. Մանկան աճման ու զարգացման օրենքների ուսումնասիրությունը:
4. Նորմալ կենսաֆիզիոլոգիական փուլերը մանկական հասակում:
5. Սպազմոֆիլիա:
6. Լիմֆատիկ-հիպոպլաստիկ դիաթեզ:
7. Էքսուդատիվ դիաթեզ:
8. Մանկական մարսողական օրգանների անատոմիական, ֆիզիոլոգիական առանձնահատկությունները:
9. Մարսողական և սննման խանգարումներ:
10. Բնական և արհեստական սնուցում:
11. Նորածինների հիվանդությունները - Erythema neonatorum. Desquamatio neonatorum. Mastitis neonatorum. Icterus neonatorum. Cephalo-Haematoma. Paralysis n. facialis et Plexus Brachialis. Պորտալարի ախտահարումներ և ինֆեկցիաները. Sepsis. Melaena neonatorum. Blennorrhoea. Pemphigus neonatorum. Tetanus.
12. Rachitis.
13. Մանկական lues. Congenitalis. lues. Ծծկերի lues. Lues tarda. Ուշացական lues.
14. tbc մանկական հասակում.
15. Meningitis tbc.
16. Meningitis Cerebros, epidaemica.
17. Morbus Heine Medini.
18. Chorea minor.
19. Բերանի հիվանդություններ.
20. Քթըմպանի կատարրներ.
21. Շնչական ուղիների կատարրներ.
22. Pneumonia.
23. Morbilli.
24. Rubeola.
25. Scarlatina.
26. Diphtheria.
27. Variola.
28. Varicella.
29. Pertussis.
30. Գրիպ.

Ստուգումներ.

IV կուրսում թեորետիկ դասընթացի վերջում, որը է ունենում ստուգում այդ կուրսից և գործնական ստուգում դիագնոստիկայից:

## ԱՉՔԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. Աչքի հիվանդությունների սիմպտոմատիկ կարճ դասախոսություններ /ըստ հնարավորության համապատասխան հիվանդների ցուցադրումով:

II. Գործնական պարապմունքներ խմբակներով /4-6 մարդ մի խմբակում/: Ամեն մի խմբակը մասնակցում է գործնական պարապմունքներին ուսումնական տարվա ընթացքում 5 անգամ /2-ական ժամով/:

Գործնական պարապմունքները պետք է ունենան հետևյալ կարգով.

1. Աչքի արտաքին զննումը և կոպը շուռ տալու տեխնիկան.

2. Աչքի անատոմիայի կրկնությունը.

3. ա) կոնյունկտիվայի պարկը կաթիլներ և օծանելիք գցելու տեխնիկան. բ) կոնյունկտիվայի այրելու տեխնիկան Sol. Argenti nitrici-ով. գ) ծանոթություն աչքի զննման կողմնային լուսավորության միջոցով, ի միջի այլոց /попутно/ ծանոթացնել ուսանողներին տրախոմայի և ֆլիկտենալոզ kerato-conjunctivitis հիվանդությունների վորոշման և բժշկության, քանի վոր վերոհիշյալ հիվանդությունները Հայաստանում հաճախ են պատահում.

4. Ծանոթություն տեսողական /оптические/ ապակիների վորոշման և ակնոցների ընտրություն.

5. Ծանոթություն ոֆթալմոսկոպելու /офтальмоскопия/ տեխնիկայի հետ:



# ԴԱՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ

# ԾՐԱԳԻՐ

Դատական բժշկականության առարկան: Նրա պատմական զարգացման հիմնական մոմենտները: Դատական բժշկականության կապը ընդհանուր բժշկականության, բնագիտության և իրավաբանության հետ: Բժշկական էքսպերտիզան իբրև դատական ապացույցների կարևորագույն ձևերից մեկը: Դատաբժշկական էքսպերտիզայի ինստիտուտները: Դատաբժշկական փորձագետի իրավունքները և պարտականությունները: Դատաբժշկական վկայականները, արձանագրությունները և ակտերը:

Մարդու օրգանիզմի ընդհանուր կազմությունը: Նրա կմախքը ընդհանրապես: Ոսկորների կազմությունը: Գլխի կմախքը՝ ողնաշարը, կրծքի վանդակը, վերին անդամների կմախքը, ստորին անդամների կմախքը և գանգը՝ դիմային ու ուղեղային: Ոսկորների միացման ձևերը՝ հոդերը:

Կմախքը դատա-բժշկական տեսակետից: Կմախքի առանձնահատկությունները ըստ տարիքի և սեռի: Մարդու և կենդանիների ոսկորների տարբերությունը: Կմախքի նշանակությունը անթրոպոմետրիայի

և էնդոկրինոլոգիայի տեսակետից: Կոնքոսկրների և հոդերի կառուցվածքը՝ կոնքաբեկումներ, կոնքոսկրների կառուցվածքի տարբերությունը և սեռ գործոնները, հոդախախտումներ, հոդի կապանները և հոդաշարժերների կառուցվածքը: Կմախքի կառուցվածքի նշանակությունը դայա-բժշկական տեսակետից: Կմախքի դայա-բժշկական նշանակություն ունեցող իրողություններ՝ կոնքերի ատրոֆիա և հիպերտրոֆիա և պաթոլոգիկ կոնքաբեկումներ: Հոդերի այլայլ և խրոնիկական հոդացավ:

Մարդու մկանային սիստեմը: Կամային և անկամային մկանները: Նրանց դասավորումը: Նրանց ֆունկցիան և նշանակությունը: Նրանց կառուցվածները դայա-բժշկական տեսակետից:

Մարդու ներքին գործարանները՝

1. Մարսողական սիստեմը, նրա կազմությունը, ֆունկցիան և նշանակությունը դայա-բժշկական տեսակետից:

2. Շնչառության գործարանները, նրանց կազմը, ֆունկցիան և նշանակությունը դայա-բժշկական տեսակետից:

3. Միզասեռական գործարանները, նրանց կազմը և ֆունկցիան: Սեռային փոխհարաբերությունների առթիվ ծագող հարցեր և քրեական օրենս-



դրության համապատասխան հոդվածներ:

Տղամարդկանց սեռական հասունության և բեղմնավորելու անկարողությունը: Կանանց սեռական հասունության և վերարտադրության անկարողությունը: Հերմաֆրոդիտիզմը: Կուսության խախտում և բռնաբարում: Անբարոյական գործողություններ: Հղիությունը և նրա տևողությունը: Հղիության կեղծումը: Կարծեցյալ և չնկատված հղիություն: Հղիության հետ կապված ուրիշ հարցեր: Վիժում: Քրեական օրենսդրության հոդվածները և այլ կարգադրությունները այս հարցի վերաբերյալ: Վիժման բնական պատճառները: Կրիմինալ վիժում: Որդեսպանություն: Հասունացած պտղի նշանները: Պտղի կենսունակության նշանները: Յերեխայի կենդանածնության ապացուցելու փորձեր: Նորածին պտղի բնական մահվան պատճառները մինչև ծննդաբերությունը, ծննդաբերության ժամանակ կամ նրանից անմիջապես հետո:

4. Ներքին սեկրեցիայի գեղձեր՝ նրանց ֆունկցիան և նշանակությունը դայա-բժշկական տեսակետից:

5. Կենտրոնական և պերիֆերիկ նյարդային սիստեմը, նրանց ֆունկցիան և նշանակությու-

նը դատաբժշկական տեսակետից:

6. Զգայարանները. նրանց դատա-բժշկական նշանակություն ունեցող վնասվածքները և հիվանդությունները:

7. Արյան շրջանառության սիստեմը: Արյան կազմը: Նրա դերը: Արյան շրջանառության գործարանները՝ սիրտը, արյան անոթները: Փոքր և մեծ արյան շրջանառությունը: Արյունը դատա-բժշկական տեսակետից՝ արյունահոսում, արյունահոսման հետևանքները: Արյունը դիակի մեջ: Արյան հետքերի մասին: Նրանց հայտնաբերելը և պահպանելը միկրոքիմիական հետազոտման համար: Արյան հետքերի նկարագրությունը հետքի վայրում: Արյան հետքերի միկրոսկոպիկ և միկրոքիմիական հետազոտության ձևերը: Տեյխման-ի փորձը: Ուլենհուտ-ի փորձը: Կանանց սեռ. օրգերից հոսած արյան առանձնահատկությունները: Արյան բծեր հիշեցնող հետքեր: Սիրտը և անոթները դատա-բժշկական նշանակություն ունեցող հիվանդություններ՝ սրտի ճարպակալում և ճարպային ու շարակցական կազմափոխում: Արթերիոսկլերոզ, անևրիզմա, թրոմբ և էմբոլ: Սրտի վնասվածքներ՝ ծակած և հրազեններից առաջացած վերքեր: Այդպիսի վնասվածքների հետևանքները: Սրտի կարվածք: Սրտի քննությունը կենդանի մարդկանց մոտ:

Մաշկի կազմությունը և դերը: Մաշկի հատկությունները: Մաշկի ֆունկցիան: Մաշկի հավելումները՝ յեղունգները և մազերը: Մաշկի մակերեսի հատկությունները՝ նրա ռելյեֆը, գույնը, հարթությունը և ջերմությունը: Մաշկի առանձնահատկությունները ըստ տարիքի, սեռի և ցեղի: Մաշկի վնասվածքները առանց նրա ամբողջությունը խանգարելու: Բարձր ջերմության ազդեցությունը մաշկի վրա. այրվածքների աստիճանները, այրվածքների հետևանքները: Էլեկտրականության ազդեցությունը մաշկի վրա: Կայծակահարություն: Քիմիական ազդակներից առաջացած վնասվածքներ: Ցրտի ազդեցությունը մաշկի վրա՝ մակերեսային և խորը փոփոխություններ: Զրում առաջացած մեխանիկական վնասվածքներ: Մաշկի մեջ առաջացած վնասվածքներ՝ արյունալցումներ, արյունուռուցներ և տրավմատիկ այտուց: Մաշկի դատա-բժշկական տեսակետից հետաքրքիր հիվանդություններ և վաղ տրավմատիկ փոփոխություններ:

Մաշկի ամբողջությունը խախտող վնասվածքներ հանգրվածքներ, քերծվածքներ և վերքեր — ծակած, կտրած, սրակողով, ջարդված

և խառն: Բաց և սուր գործիքներից առաջացած վերքերի տարբերությունը:
Հրազենիներից առաջացած վերքեր: Գնդակի մտից և ելից անցքերը և խողովակը: Ծակած վերքեր: Ջլխարում: Մաշկի ամբողջության խախտող վնասվածքների առթիվ ծագող հարցեր: Վնասվածքների կլասիֆիկացիան՝ ըստ մեր քրեական օրենսդրության:

Մարդկանց նույնացման խնդիրը: Բերտիլոնի ձևը: Դակտիլոսկոպիա: Նրա տեխնիկան և կլասիֆիկացիան: Մարդու մարմնի վրա եղած պրոֆեսիոնալ նշաններ: Տատուիրովկա:

Հայրության վորոշման հարցի արդի դրությունը: Կենդանի մարդկանց տարիքի վորոշումը:

Դիակի սկզբնական արտաքին զննման նշանակությունը: Հետազոտող մարմինների և միլիցիայի աշխատակիցների դերը՝ դիակի սկզբնական արտաքին զննման ժամանակ: Դիակի զննումը դեպքի վայրում: Ընդհանուր դիտողություններ: Լուսանկարության անհրաժեշտությունը: Սկզբնական զննման արձանագրությունը: Դիակի ընդհանուր դիրքը և դիրքը դեպքի վայրում: Դիակի վրա կամ շրջակայքում գտնված իրերի նշանակությունը: Դիակի հագուստի զննումը: Դիակի շուրջը գտնվող իրերի քննությունը:

Մահվան նշաններ: Դիակային ընդհանուր յերևույթներ՝ սառչում, չորացում, փայլատում, դիաբծեր, կանաչավունություն, փտման բծեր, բշտիկներ և դիակային մումիֆիկացիա: Փտման պրոցեսները ներքին օրգաններում: Նրանց քայքայումը փտելուց: Վնասված հյուսվածքների դիմացկունությունը փտման պրոցեսում: Մումիֆիկացիա յեվ դիաճարպ: Դիակի վրա հայտնաբերված բնույթյուն - նեխվածքի նշանակությունը:

Դիակների զննումը մահվան առանձին դեպքերում՝

1. Հանկարծամահ : Նրա պատճառները:

2. Կախված: Խեղդվածքի ակոսի առանձնահատկությունները: Դեպքի վայրի զննման նշանակությունը նման դեպքերում:

3. Խեղդվում ջրում:

4. Խեղդում ձեռքով:

5. Շնչառության անցքերի փակելուց առաջացած մահ:

6. Կրծքի վանդակի և վորովայնի սեղմելուց առաջացած մահ:

7. Օտար մարմիններից առաջացած մահ:

8. Զրահեղձում, դիակի ջրում մնալու նշանները:

9. Բութ և սուր գործիքներից և հրազեններից առաջացած մահ:

10. Մահ բարձր և ցածր ջերմության ազդեցություններից:

11. Մահ էլեկտրահարությունից:

12. Մահ թունավորումից: Թունավորվածների դիահերձման առանձնահատկությունները: Քիմիական անալիզի նման դեպքերում և նրա հետ կապված ցիվականությունները: Ինքնասպանություն:

Գործունակության և մեղսունակության հարցերը՝ ըստ մեր օրենսդրության:

Հոգեկան հիվանդների դատա-բժշկական քննությունը: Հիշյալ հիվանդներին վերաբերյալ գործող օրենսդրության համապատասխան հոդվածները:



# ԾՐԱԳԻՐ

## ՏՐՈՊԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

### Ներածություն

1. Տրոպիկ և տաք յերկրների աշխարհագրական, յերկրաբանական, բուսա-կենդանաբանական, կլիմայական, մթնոլորտային և այլ առանձնահատկությունները:

2. Տրոպիկ հիվանդությունների էթիոլոգիան. Նախակալված, ռասսե պարազիտներ միջատների:

Տրոպիկ պրոտոզոային հիվանդություններ-

3. Մալարիա: Պատմական տեղեկություններ: Աշխարհագրական տարածում: Հարուցիչների ձևաբանությունը և կենսաբանությունը: Նրանց զարգացման շրջանները մարդու և մոծակի օրգանիզմների մեջ: Մոծակների դերը մալարիայի տարածման մեջ: Մալարիայի կլինիկան: Առանձին ձևերը ըստ մանրէների տեսակների: Խառն վարակումներ: Առանձին յերեվույթների պարոքսիզմը: Սուր, քրոնիկ և ծածուկ մալարիա: Մալարիայի չարորակ և համակցյալ ձևեր: Մալարիայի բարդությունները և հետևանքները: Անատոմիական փոփոխությունները մալարիայի ժամանակ: Հեմոգլոբինուրիային տենդ:

նրա էությունը; և պաթոգենեզիս թեորիաները: Կարմիր և ծածուկ մալարիայի ախտորոշումը և արյան պատկերը այդ դեպքերում: Մալարիայի և հեմոգլոբինուրիային տենդի բժշկությունը: Իմմունիտետի հարցը: Մալարիայի պրոֆիլակտիկան:

4. Մալարիան և հակամալարիային պայքարը Հայաստանում:

5. Ամեոբիազ կամ ամեոբիկ դիզենտերիա: Պատմական տեղեկություններ: Աշխարհագրական տարածում: Հարուցիչները ցիկլ-կենսաբանությունը և պաթոգենությունը: Կլինիկական պատկերը: Ախտորոշում: Դիզենտերիային և այլ պաթոգեն ամեոբների տարբերական հատկանիշները. Ամեոբիազի բժշկությունը: Իմմունիտետ: Համաճարակագիտությունը: Պրոֆիլակտիկա:

6. Լամբլիազ և այլ աղիքային վարակումներ /բալանտիդիազ, վարակում Chilomastix M և Trichomonastut/

7. Ամեոբիազը և այլ աղիքային վարակումներ Հայաստանում:

8. Լեյշմանիոզներ: Կալա-ազար կամ վիսցերալ լեյշմանիոզ: Պատմական տեղեկություններ: Աշխարհագրական տարածում: Հարուցիչները ցիկլ-կենսաբանությունը և պաթոգենությունը: Կուլտուրային ցիկլը: Կլինիկական պատկերը: Անատոմիական փոփոխությունները: Ախտորոշում: Բժշկությունը: Համաճարակագիտություն /շների լեյշմանիոզ/ տարածող յենթադրյալ միջատներ: Պրոֆիլակտիկան:

9. Մաշկային լեյշմանիոզ: Leishmaniasis cutanea: Աշխարհագրական տարածում: Հարուցիչները: Կլինիկական պատկերը: Բժշկությունը: Իմմունիտետը: Համաճարակագիտությունը և պրոֆիլակտիկա:

10. Լեյշմանիոզը Հայաստանում:

11. Տրիպանոզոմիազներ /տրիպանոզներ/: Աֆրիկական տրիպանոզոմիազ կամ քնախտ: Աշխարհագրական տարածում: Հարուցիչները ցիկլ-կենսաբանությունը և պաթոգենությունը: Գլոսինների դերը հիվանդության տարածման մեջ: Կլինիկական պատկերը: Ախտորոշում: Բժշկությունը: Համաճարակագիտություն և պրոֆիլակտիկան:

12. Բրազիլիական տրիպանոզոմիազ կամ Thyreoiditis parasitaria: Հարուցիչները: Նրանց ցիկլ-կենսաբանական առանձնահատկությունները: Տարածող միջատը: Կլինիկական պատկերը:

13. Կենդանիների տրիպանոզոմիազներն ընդհանրապես և Հայաստանում:

14. Պիրոպլազմոզներն ընդհանրապես և Հայա-

վրանում:

15. Սպիրոխետային հիվանդություններ: Աֆրիկական վերադարձ տենդ: Հարուցիչների ձևա-կենսաբանությունը և պաթոգենությունը: Տարա-ծող տիզը: Կլինիկական պատկերը. Ախտորոշումը: Իմմունիտետը:

Պարսկաստանում և Հայաստանում տիզա-կան վերադարձ տենդի հայկական գոյության մա-սին. Ornithodorus tataye: տիզը Հայաստանում:

16. Դեղին տենդ: Աշխարհագրական տարա-ծումը: Հարուցիչների ձևա-կենսաբանությունը և պաթոգենությունը: Տարածող միջատը: Կլինիկական պատկերը: Անատոմիական փոփոխությունները: Ախտո-րոշումը: Բժշկությունը: Պրոֆիլակտիկան:

17. Framboesia tropica: Աշխարհագրական տարածումը: Հարուցիչները: Կլինիկական պատկերը: Բժշկությունը:

18. Sokodu հիվ. /Մեծ Մկների կծելուց առա-ջացած հիվանդություն/:

Հարուցիչները և կլինիկական պատկերը:

19. Տրոպիկ բակտերիային հիվանդու-թյուններ. Մալթայան տենդ: Աշխարհագրական տա-րածումը: Հարուցիչների ձևա-կենսաբանությունը և պաթոգենությունը: Կլինիկական պատկերը: Ախտո-րոշումը: Բժշկություն: Համաճարակագիտությունը: Պրոֆիլակտիկա:

20. Մալթայան տենդը Հայաստանում /Ժան-կարիք: Խոլերա: Բոր: Granuloma venereum/:

21. Տրոպիկ սնկային հիվանդություններ. Մադուրյան հիվանդություն: Տրոպիկ դերմատոմիկոզ-ներ:

Տրոպիկ հիվանդություններ անհայտ հարուցիչնե-րով.

22. Պապատաչի տենդ: Աշխարհագրական տա-րածումը: Կլինիկական պատկերը: Ախտորոշումը: Համաճարակագիտությունը: Պրոֆիլակտիկա:

Պապատաչի տենդը Հայաստանում:

23. Դենգե հիվանդությունը: Նրա տարածումը և կլինիկական պատկերը:

24. Verruga peruana կամ Carrion-ի հի-վանդություն: Կեդանի կամ Tsutsugamushi հիվան-դությունը: Բծավոր տենդ կամ Spotted fever: Տա-րածումը և կլինիկական պատկերը:

## Էքսպերիմենտալ հիգիենայի ավանդման մեթոդիկան

1. Հիմք է ընդունվում դասախոսային լաբորատոր և կոլեկտիվ-ռեֆերատային սիստեմը:

2. Դասախոսության յուրաքանչյուր գլուխ ավարտելուց հետո, լաբորատորում կատարել դեմոնստրացիա տվյալ գլխին վերաբերող գործիքների և ապպարատուրայի գործածական ձևերը:

3. Դասախոսություններից հետո, ուսանողները նույն օրն անցնում են խմբերով լաբորատորիա և այնտեղ կատարում են գործնական աշխատանքներ, օգտվելով իր բացատրություններից և նույն նյութի վերաբերյալ պատրաստված կոնսպեկտի աջակցությամբ:

4. Գործնական աշխատանքների ընթացքում մի որևէ բաժին վերջացնելուց հետո, ուսանողներից պահանջվում է ստուգում գործնական աշխատանքների, հիմնավորելով գիտական բացատրություններով, որոնք արդեն կարդացված են դասախոսությունների ընթացքում:

5. Մի որևէ գլխից անբավարար ուսանողներին կրկին հնարավորություն է տրվում լաբորատորիայում աշխատելու ժամերից դուրս և նույն գլխից կրկին անգամ ստուգման ներկայանալու:

6. Կատարվում է գործարանային հետազոտում, պարզելու գործարանի աշխատանքի առողջապահական դրությունը, տեղում հետազոտելու օդը, ջուրը, հագուստը և այլն:

7. Պարբերաբար ամիսը մեկ անգամ կամ ավելի հաճախ կազմակերպվում են էքսկուրսիաներ դեպի առողջապահական հիմնարկները /հիվանդանոց, մեքենայական փուռ և այլն:/

8. Ուսանողները խմբերով դասախոսի կամ ասիստենտի ղեկավարությամբ գնում են շուկա՝ ինսպեկտելու և ծանոթանալու համար կատարվող ֆալսիֆիկացիաների հետ, հնարավորության դեպքում կատարելով տեղում հասարակ փորձեր:

9. Էքսկուրսիաներից հետո, դասախոսը դասախոսության ընթացքում մանրամասն վերլուծում է հետազոտված հիմնարկի սանիտարա-առողջապահական վիճակը և դրան հակադրում գիտության վերջին խոսքով կահավորված և սանիտարական-առողջապահական պահանջներին բավարարող տեղի մի որևէ հիմնարկ:

10. Բաժանել ուսանողներին առողջապահական նյութեր-զեկույցներ-ռեֆերատներ գրելու գլխավորապես մեր քաղաքի և գյուղի արտադրողական բնակա-

կառներից, դուրս նրանց համապատասխան ցուցմուն-քներ:

Այդ ռեֆերատների շնորհիվ ուսանողը կըխո-րանա տվյալ նյութի ուսումնասիրության մեջ և կուր-սի անմիջական ակտիվ մասնակցությամբ մոտեցման վերլուծման կենսարկեք:



# ԾՐԱԳԻՐ

## ԷՔՍՊԵՐԻՄԵՆՏԱԼ ՀԻԳԻԵՆԱՅԻ

1. Առողջապահության պատմությունը և նրա ընթացքը: Նախնական դարերից մինչև մեր օրերը:

2. Առողջապահության կարգավորումը կոոպերացիայի գի-տության և սանիտարության կողմից գործնական կիրա-ռում:

3. Առողջապահության սոցիալ-տնտեսական նշա-նակությունը կապիտալիստական և սոցիալիստական հա-սարակարգում:

4. Կիրառման կողմից ներկայի առողջապահու-թյան հիմք և Խ. Միության սանիտարական դրությունը:

### ՕԴ

1. Օդի կազմվածքը.
2. " ճնշումը.
3. " ջերմությունը.
4. " խոնավությունը.
5. " մեջ գտնվող միկրոօրգանիզմները.
6. Ապականված օդ.
7. Գազերը և գոլորշին օդի մեջ.
8. Խոնավաչափ մեքենաներ /բարոմետր, ջերմա-

չափ և այլն/.

9. Օդի միջի փոշին.

10. Ինչպես ներգործում օդի մեջ գտնվող փոշին.

11. Ինչպես վորոշել օդի ջերմությունը և հոսանքները:

12. Օդի ջերմության առնչությունը մարմնի ջերմության հետ:

## ԿԼԻՄԱ

1. Կլիմայական խնդիրները.

2. Կլիմայի ազդեցությունը առողջության վրա- ծովային, լեռնային, դաշտային.

3. Բարեխառն ու ցուրտ կլիմա.

## ՀԱԳՈՒՍՏ

1. Զանազան կերպասների հատկությունը.

2. Առողջապահական հագուստ.

3. Գլխարկ, կոշիկ, մահճակալ և ամենօրյա լվացումն ու բաղնիք:

## ՋՈՒՐ

1. Ծովերը.

2. Խմելու ջուր.

3. Միկրոորգանիզմները ջրի մեջ.

4. Ջրի ստերիլիզացիա.

5. Ֆիլտրացիա.



6. Ջրի կուտակումը.

7. Ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունները.

8. Ջրի մեջ յեղած պարազիտները.

9. Ջրի բաղադրությունը.

10. Ջրի անալիզը.

11. Ջրի բակտերիոլոգիական և քիմիական հետազոտությունը:

## ՀՈՂ

1. Հողի կազմվածքը.

2. Հողի ջերմությունը.

3. Հողի մեջ պարունակվող ջուրը

4. Ջրի ծծվելը հողի մեջ.

5. Անցքերի գոլորշացումը.

6. Նյութերի փտումը հողի մեջ.

7. Հողի մեջ գտնվող միկրոօրգանիզմները.

8. Ստորերկրյա ջրեր.

9. Առողջ հող.

10. Ապականված հող.

11. Հողի հետազոտումը.

12. Հողի քամարությունը.

13. Հողի քիմիական և բակտերիոլոգիական հետազոտությունը:

## ԲՆԱԿԱՐԱՆ

1. Բնակարանի նպատակը.
2. Տեղի ընտրությունը.
3. Հողի գետնակը.
4. Շինանյութերի հետազոտումը.
5. Դիրքը.
6. Առաստաղը, խոհանոցը և արտաքնոցը.
7. Բնակարանային կահավորումը.
8. Սենյակների օդի քանակը.
9. Բնակարանի խոնավությունը.
10. Ինչպես պահպանել բնակարանը.
11. Վառելանյութերը.
12. Բուխարի.
13. Վառարանները.
14. Թիթեղյա վառարաններ.
15. Պաղցի վառարաններ.
16. Գազի վառարանը.
17. Նավթի վառարան.
18. Ալկոհոլի վառարան.
19. Էլեկտրական վառարան.
20. Կենտրոնական վառարաններ
    a. տաք օդով
    b. տաք ջրով
    c. գոլորշիով



21. Ինչ ազդման փոխություն է անհրաժեշտ բնակարանի համար:
22. Ծխի վատ ազդեցությունը:

## ՎԵՆՏԻԼԱՑԻԱ

1. Բնակարանի վենտիլացիա.
2. Շարունակական վենտիլացիա.
3. Պարբերաբար վենտիլացիա.
4. Վենտիլատորների տեսակները.

## ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

1. Բնական լույսի նշանակությունը.
2. Լույսի վնասակար ազդեցությունը տեսողության վրա:
3. Անբավարար լույսը և նրա հետևանքները.
4. Լուսավորության միջոցները
    a. Մոմի լույսը
    b. Գազի լույսը
    c. Էլեկտրական լույսը
    d. Լամպայի լույսը
5. Ինչպես չափել լույսի ուժը
6. Գնահատումը լուսավորության զանազան սիստեմների.
7. Լուսատու նյութերի հետազոտումը:

## ՔԱՂԱՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

1. Ընդհանուր գիտություն քաղաքների կառուցման համար.
2. Ջրամատակարարում.
3. Ջրի պահեստը.
4. Կլիման, ջրի ազդեցությունը ազգաբնակության վրա.
5. Տնային պետքերի համար գործածվող ջրի քանակը.
6. Անձրևի ջրի հեռացումը և մաքրագործումը.
7. Աղբյուրի ջրի մատակարարումը.
8. Ջրի զտումը.
9. Ինչպես մաքրել քաղաքի-աղբի փոսերը „լճակները" և այլ ավազաններ.
10. Քաղաքային հասարակական արտաքնոցները և նրանց չափերը.
11. Կանալիզացիա.
12. Ինչպես մաքրել փողոցները.
13. Աղբի օգտագործումը.
14. Ինչպես մաքրել կանալները.
15. Գերեզմանատուն.
16. Գերեզմանատան ազդեցությունը առողջության վրա.
17. Դիակների այրումը.
18. Կուլտուրական հիմնարկների կառուցումը.
19. Դպրոցների կառուցումը.
20. Բանտերի կառուցումը.
21. Հիվանդանոցների կառուցումը.
22. Սանատորիաների կառուցումը.
23. Դիսպանսերների "
24. Մանկապարտեզների "
25. Ակումբների "
26. Բաղնիքների "
27. Հանրակացարանների "
28. Ապաստանոցների "
29. Հասարակական փոխադրության միջոցները.
30. Քաղաքային պարտեզներ.
31. Քաղաքի լուսավորությունը:

## ՍՆՈՒՆԴԸ

1. Սնունդը և նրա խնդիրները.
2. Սննդի պրոցեսը.
3. Սննդի նյութերը.
4. Հացը.
5. Ճարպը.
6. Միապաղաղ սնունդ.
7. Վեգետարիանիզմ.
8. Մարդու օրվա սննդի կարիքը.

9. Եղանակագրական անկյուն.

## ՄԻՍ

1. Զանազան կարգի մսեր.
2. Մսերի պատրաստումը.
3. Պահածո միս.
4. Զանազան կենդանիների մսեր.
5. Մսի պարագաները.
6. Փչացած միսը
7. Մսի պահոցը
8. Մսի անալիզը, մանրէները և այլն:

## ԿԱԹ

1. Կաթի կազմվածքը.
2. Ինչպես է փչանում կաթը.
3. Ինչպես պահել կաթը.
4. Կաթի հսկողությունը.
5. Պաստերիզացիա.
6. Կաթի վերլուծումը.
7. Քաղաքի կաթի կազմակերպում.
8. Կեղծված կաթ.
9. Ինչպես ապացուցել կեղծված կաթը.
10. Պահածո կաթ
11. Գոմերի-ֆերմաների սանիտարական պայմանները:



## ԿԱԹՆԱՄԹԵՐՔՆԵՐ

1. Կարագ.
2. Յուղ.
3. Պահածո յուղ.
4. Արհեստական յուղ.
5. Յուղի հետազոտումը.
6. Պանիր.
7. Սեր, մածուն և այլն.

## ՀԱՑԱՀԱՏԻԿՆԵՐ

1. Հացահատիկները առհասարակ
2. Հացահատիկների բաղադրությունը
3. Միկրոսկոպիկ հետազոտում
4. Փչացած հացահատիկներ
5. Հացահատիկների հիվանդությունները
6. Աղբաքայների խառնուրդները հացահատիկների մեջ:

## ԱԼՅՈՒՐ

1. Ալյուրի պատրաստումը
2. Ինչպես պահել ալյուրը
3. Փչացած ալյուր և կամ բույսերի խառնուրդը.
4. Աղվածքը և մաղվածքը.

## ՀԱՑ և ՈՒՐԻՇ ՍՆՆԴԱՆՅՈՒԹԵՐ

1. Հացի տեսակները

2. Հացի պահելը
3. Հացի վերլուծությունը
4. Բրինձ
5. Գետնախնձոր և նրա հետազոտությունը /սունկերը/
6. Բուսայուղ
7. Շաքար-սախարին-մելասա և այլ քաղցրավենիք.
8. Ողորակ
9. Մեղր
10. Մեխակ
11. Զաֆրան
12. Մանանեխ
13. Սուրճ
14. Կեղծած սուրճ
15. Թեյ
16. Կակաո և այլն

## ՎՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐ

1. Գարեջուր
2. Գինի
3. Օղի
4. Զանազան լիկյորներ
5. Նրանց անալիզները
6. Ալկոհոլի վնասակար ազդեցությունը առողջության վրա.



7. Արհեստական պատրաստած վոգելից խմիչքներ /լիմոնադ և այլն/
8. Նրանց ֆալսիֆիկացիան

## ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

1. Հակաառողջապահական պայմանների ազդեցությունը մանուկների վրա.
2. Մանկական կյանքի առողջապահությունը,
   a. որորոց
   b. սնունդ
   c. մաքրություն
   d. կաթից կտրել
3. Դպրոցական առողջապահություն
4. Պայքար դպրոցական հիվանդությունների դեմ.
5. Պիոներական առողջապահություն.
6. Աբորտ
7. Սեռական առողջապահություն
8. Վաղահաս սեռական հարաբերության ազդեցությունը օրգանիզմի վրա

## ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ

Զինվորական առողջապահություն

1. Զորանոցը.
2. Զորանոցի օդը – ջերմությունը.

3. Զինվորական հագուստը

4. Զինվորական բաղանիքները

5. Սնունդը

6. Ուժերի սպառումը

7. Զինվորական ֆիզիկ. դաստիարակություն

8. Զինվորական մարզանքների ազդեցությունը օրգանիզմի վրա.

9. Զինվորների բժշկական քննությունը

10. Խորհրդային առողջապահական պարտադիր օրենքները զինվորականության համար և պատերազմի ժամանակ.

11. Ժողովրդի ռազմականացումը

12. Պատերազմական գազեր

13. Օդանավային և նավային առողջապահություն.

## Պայքար վարակիչ հիվանդությունների դեմ.

1. Չվարակվելու միջոցները

2. Վարակիչ դիակներից չվարակվելու միջոցները.

3. Հիվանդների կողմից տարածվող վարակի դեմ պայքար.

4. Քրձապատի /հիվանդի/ վարակի վոչնչացման միջոցները.



5. Թագնված վարակների դեմ պայքար

6. Կենդանիների միջոցով տարածվող վարակի հակամիջոցները

7. Քրձապատում վարակում առաջացնողների դեմ սանիտարական ձեռնարկումները

8. Միջազգային սանիտարական միջոցները վարակի տարածման դեմ

9. Օրգանիզմի վարակվելու ընդունակության հակամիջոցները:

# ԾՐԱԳԻՐ

## ՀԵԼՄԵՆՏՈԼՈԳԻԱՅԻ

1 պարապմունք. Ծանոթություն հելմենթոլոգիական հերձումների հետ և հերձված կենդանու յուրաքանչյուր օրգանի, պարազիտ որդերի քանակական և որակական լրիվ հաշվառումը:

2 պարապմունք. Ծանոթություն կեղքությունների հետազոտության Մակույի մեթոդի հետ, մի կաթիլ ֆիզիոլոգիական լուծույթով, որդերի ձվիկների հայտնաբերման համար:

Պրեպարատների պատրաստելը, հետազոտելը միկրոսկոպով և նկարելը Ascaris lumbricoides-ի ձվիկների: Ցուցադրում Ascaris lumbricoides իրենց որդերին:

3 պարապմունք. Ծանոթություն կեղքության հետազոտության Fulleborn-ի մեթոդի հետ: Նրա կազմը. պրեպարատների պատրաստելը. նայել և նկարել Trichocephalus trichiurus-ի ձվիկների: Մազագլուխ որդի ցուցադրումը:

4 պարապմունք. Ծանոթություն հելմինթոսկոպիական մեթոդի Telemani-ի հետ պրեպարատ



պատրաստելը նայելը և նկարելը Enterobius vermicularis-ի ձվիկների: Կրկնակի ցուցադրումը Ascaris lumbricoides-ի և Trichuris-ի ձվիկների:

5 պարապմունք. Fasciola hepatica-ի, Fasc. gigantica-ի և Dicrocoelium lanceatum-ի ձվիկների նայելը և նկարելը: Այդ պարազիտներով վարակված լյարդի ցուցադրումը: Մակրո և միկրոսկոպիկային ուսումնասիրումը լյարդից ստացված որդերից:

6 պարապմունք. Diphyllobothrium latum-ի ձվերի պրեպարատի պատրաստելը և նկարելը նրանց:

7 պարապմունք. Ծանոթություն Taenia saginata-ի և T. solium-ի ձվերի, բրթուային զրզանի և հասունացած սեգմենտների հետ: Ձվերի նկարելը, ցուցադրումը ժապավենաձև և ֆինոզային պրեսակների:

8 պարապմունք: Hymenolepis nana-ի ձվերի պրեպարատ պատրաստելը, նկարելը և ծանոթություն պարազիտի հետ:

9 պարապմունք. ուսումնասիրելը և նկարելը Trichostrongylus-ի ընտանիքի ձվերի. Ծանոթություն պարազիտի հետ. Strongylato յերա-

ընդգծերի 3-ի և 4-ի սեռական ապարատի կառուցվածքը:

10 պարապմունք. Ancylostoma duodenale և Necator americanus որդերի ձվերի հետազոտությունը: Ծանոթություն կեր որդերի թրթուրների կուլտուրա պատրաստելու մեթոդների հետ:

11 պարապմունք. Strongyloides stercoralis որդի բազմացման թրթուրների հետազոտությունը կղանքների մեջ:

12 պարապմունք. Ծանոթություն պարազիտ որդերի պահպանման մեթոդների հետ և որդերի ձվերի մշտական պրեպարատներ պատրաստելու միջոցների հետ:

13 պարապմունք Ծանոթություն պարազիտ որդերի ներկման և պարզեցման հիմնական մեթոդների հետ:

14 պարապմունք. Ամփոփողական և կրկնակի հետազոտապրակտիկական կենդանություն, ուսուցված ամբուլատորիայի հիվանդներից:

Ցերկու կրկնողություն անցած թեմաների կուրսից /1/ Trematod-ներ և Cestodes-ներ և 2/ Nematod-ներ/:



Թեմատիկ դասախոսությունների կարգը -

Ակարների կառուցվածքով:

1 դասախոսություն. Հելմինթոլոգիան որպես բժշկական դիսցիպլինա: Պարազիտիզմը բնության մեջ, նրա առաջացումը. մշտական ու ժամանակավոր պարազիտներ: Էկտո և էնդո պարազիտներ: Պարազիտիզմի ազդեցությունը պարազիտների կազմության և ֆունկցիայի վրա. պարազիտների պաթոգենությունը և դրա պատճառները: Պարազիտների յուրահատկությունը դեպի տերերը: Մասնագետներ և ոմնիվորներ:

Ֆարմակ որոշը: Հելմինթոլոգիան, որպես պարազիտոլոգիայի ճյուղը:

2 դասախոսություն. Հելմինթոլոգիան և բժշկությունը: Որդային հիվանդության տարածվելը և պայմանները, որոնք ազդում են նրանց զարգացման: Հայաստանի որդային հիվանդները: Պարազիտ որդերի նշանակությունը մարդու համար: Մարդկանց համար վնասակար որդերի տեսակների թիվը: Որդերի լոկալիզացիան. որդերի պատճառած վնասները կախված կողմերը՝ թույներ արտադրելը, մեխանիկական ազդեցությունը. միկրոբների ինվազիայում որդերը և նոր կապերի առա-

զանալը /новообразование/: Որդերի միգրացիայի /миграция/ երևույթը և այդ երևույթի նշանակությունը բժշկության մեջ: Բժշկական հելմինթոլոգիայի խնդիրները, բովանդակությունը և ծավալը:

3 դասախ. Պարազիտ որդերը և նրանց դերը կենդանիների օրգանիզմի մեջ:

Պարազիտ որդերի կլասիֆիկացիան, Տրեմատոդներ. Նրանց կազմա-բնախոսական բնութագիրը: Տրեմատոդներ, մարդու պարազիտ լինելով և նրա վնասակար նշանակությունը: Լյարդի գրի-պոմակացան. Fasciola gigantica, Fasciola hepatica, Dicrocelium lanceatum, Opisthorchis felineus, Chonorchis sinensis, Pseudamphistomum truncatum.

4 դասախ. Թոքերի պարագոնիմոզը, Paragonimus Westermanni. Աղիքային Տրեմատոդներ. Fasciolopsis buski. Heterophyis և Metagonimus ցեղերի ներկայացուցիչները. Echinostomidae. Կազմա-բնախոսական բնութագիրը. վերոհիշյալ պարազիտ որդերի: Նրանց աշխարհագրական տարածվածությունը, զարգացման ցիկլը. Կլինիկական պատկերը. Նրանց ինվազիան. բժշկելը. պրոֆիլակտիկ միջոցները:

5 դասախ. Բիլհարցիոզներ. Schistosoma haematobium, Schistosoma mansoni և Schistosoma japonicum. Նրանց տարբերությունը կազմա-բնախոսական հատկանիշերով մյուս տրեմատոդներից: Նրանց դերը և նշանակությունը մարդկային պաթոլոգիայի մեջ: Բժշկելը. պրոֆիլակտիկ միջոցները:

6 դասախ. Ցեստոդներ. Ցեստոդների յերկու խումբը՝ Pseudo- Cyclophyllidae. Կազմաբնախոսական բնութագիրը. Նրանց վնասակարությունը, լինելով մարդու պարազիտ. Ցեստոդների թրթուրային փուլերը. Ֆիննաներ. /Cysticercos-ներ Cysticercoidos-ներ/. Էխինոկոկոզներ, ցենուրոզներ, պլերոցերկոիդներ:

7 դասախ. Մարդու ցեստոդները, առաջացած ժապավենաձև որդերի զանազան տեսակներից. Cyclophyllidea-ի խմբակից՝ T. solium, Taenia saginata, Taenia coenurus, Taenia echinococcus և Taenia multilocularis.

8 դասախ. Hymenolepididae. Hymenolepes nana և Hymen. diminuta. Dipilidiidae. Dipilidium caninum. Davaineidae. Dav. asiatica. Dav. madagascariensis. Նրանց կազմախոսությունը և զարգացման ցիկլը. աշխարհագրական տարածվածությունը. Դիագնոստիկա. Կլինիկական պատկերը. Թերապիա և պրոֆիլակտիկա:

9 դասախ. Pseudophyllidae խումբը. Diphyllobotrium ցեղերի ներկայացուցիչները /Dibotriocephalus/. նրանց տարբերությունը կազմա-բնախոսական տեսակետից, համեմատած մյուս ցեստոդներից. այդ տարբերության գործնական նշանակությունը բժիշկների համար: Diphyllobotrium latum. D. minus, D. mansoni, Sparganum prolifer. Diplogonoporus ցեղի ներկայացուցիչները՝ Dipl. grandes. Dipl. brauni. Կլինիկա. Թերապիա. Պրոֆիլակտիկա:

10 դասախ. Նեմատոդներ - կազմա-բնախոսական նկարագրությունը. Մարդու պարազիտ նեմատոդների վնասակար դերը: Rhabditis և anguillula Strongyloides ցեղերի ներկայացուցիչները՝ Rhabditis hominis, R. niellyi, Ang. acet. Strongyloides stercoralis. կազմախոսությունը. բնախոսությունը. աշխարհագրական տարածվածություն. կլինիկական պատկերը. Թերապիա. Պրոֆիլակտիկա:

11 դասախ. Ancylostome և Necator ցեղերի ներկայացուցիչները՝ Ancylostoma duodenale և Necator americanus. Trichostrongylus intstabilis. Վերոհիշյալ պարազիտ որդերի նշանակությունը մարդու աշխատունակության մեջ: Նրանց կազմա-բնախոսական բնութագիրը և զարգացման ցիկլը. աշխարհագրական տարածվածությունը, կլինիկական պատկերը. Թերապիա, Պրոֆիլակտիկա:

12 դասախ. Metastrongylus elongatus, syngamus kingi. Ասկարիդա. Ascaris lumbricoides. Toxocara cati, Toxocara canis. Սրատուտ Enterobius vermicularis. Վերոհիշյալ որդերի կազմա-բնախոսությունը: Էկոլոգիա. Պաթոգենեզ. Սիմպտոմատոլոգիա, Թերապիա, Պրոֆիլակտիկա:

13 դասախ. Տրիխուրոզ. Trichuris trichiurus ֆիլյարիդներ Wuchereria /Filaria/ bancrofti հասունացած պարազիտների կազմախոսությունը. Նրա լոկալիզացիան մարդու օրգանիզմում, նիմֆի յերկարակեցությունը. զարգացման ցիկլը, վնասակար նշանակությունը, աշխարհագրական տարածվածությունը: Էկոլոգիա, Էլեֆանտիազիս, Դիագնոստիկա. բուժումը Պրոֆիլակտիկա:

14 դասախ. Loa. Loa. Onchocerca volvulus. Acanthocheilonema persans. այս ֆիլյարիաների կազմախոսական նկարագրությունը. զարգացման ցիկլը, լոկալիզացիա մարդու օրգանիզմում, վնասակար-նշանակությունը, կլինիկական պատկերը. բուժումը. Պրոֆիլակտիկա. Վորդային հիվանդությունների սերոլոգիական ռեակցիաներ: Արյան պատկերը, վորդային հիվանդություններից բժշկելու ընդհանուր սկզբունքներ:

## Հոսպիտալ վիրաբուժական կլինիկայի դասավանդման պլանը և յեղանակը:

Հոսպիտալ կլինիկայի ավանդման միջոցին դասախոսը այնքան չէր հետևում նյութի հերթականության, այլ ձգտում է տալ նյութը մոտավորապես այնպես, ինչպես կյանքն ինքն ենթադրում է իրան դասախոսին, այսինքն առանձին ընդհանրության կարգին չէր կցակցում այս դեպքում, ինչպես այդ տեղի ունի ֆակուլտետական վերաբ. կլինիկայում:

Ի նկատի ունենալով, որ հոսպիտալ կլինիկա լսող ուսանողները արդեն որոշ հմտություն ունեն հիվանդ քննելու գործում, ուստի այստեղ հիվանդի քննության վերլուծումը չէր կատարվում այնքան մանրա , ինչպես ֆակ. կլինիկայում, հետևաբար այստեղ հնարավոր է ցույց տալ քանակով շատ ավելի հիվանդ.

Վերջնական ձգտումը այս կլինիկայի կայանում է նրանում, որ ուսանողը այնտեղից դուրս գա պատրաստ կյանք մտնելու և կյանքի պայմաններում աշխատելու հնարավորություններով:

Մնացյալում պարապմունքները նույն են, ինչպես և ֆակ. վերաբ. կլինիկայում:

# ԾՐԱԳԻՐ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ

1. Կնոջ կոնքի անատոմիան մանկաբարձական տեսակետից: Կոնքերի սեռական, ցեղական և ինդիվիդուալ առանձնահատկությունները: Կնոջ սեռական օրգանների անատոմիան մանկաբարձական տեսակետից:

2. Դաշտանի ֆիզիոլոգիան: Բեղմնավորումը: Սաղմի զարգացումը: Պտղի և ձվի մասերի զարգացումը ըստ հղության ամիսների:

3. Պտղապլարը, պլացենտան /ընկերը/ և պտղապարկի մասերը:

4. Հասուն պտուղը. Նրա չափերը: Յերկորյակներ և բազմորյակներ:

5. Հղության ախտորոշությունը:

6. Հղության հետ կապված փոփոխությունները կնոջ սեռական ապարատի և ամբողջ օրգանիզմի մեջ:

7. Հղության դիագնոստիկը: Դրական և հավանական նշանները: Հղության դիֆերենցիալ դիագնոզը: Հղության ամսի և ծննդաբերության ժամկետի որոշումը: Պտղի կենդանության և մահվան որոշումը:

8. Առաջին և կրկնակի հղության որոշումը: Պտղի դիրքը, առաջադիր մասը և անդամադասավորումը: Պտղի չափի որոշումը:

9. Ծննդաբերության սկսվելու պատճառները:



Ծննդաբերության ընթացքը. Շրջանները և տեվողությունը:

10. Ծննդաբերական արտաքսող ույժերը: Ծննդաբերության մեխանիզմը գագաթային դիրքի դեպքում:

11. Ծննդաբերության մեխանիզմը դիմային և հետույքային դիրքերի դեպքերում: Պտղի գլխի ձևափոխումը ծննդաբերության մեխանիզմի միջոցին: Յերկորյակի և բազմորյակի ծննդաբերությունը:

12. Ծննդկանների սեռական մասերի և ամբողջ օրգանիզմի փոփոխությունները:

13. Հղիների, ծննդաբերների և ծննդկանների դիետիկան: Նորածնի խնամքը:

14. Հղիների սուր և քրոնիկ ընդհանուր հիվանդությունները:

15. Հղիների անզուսպ փսխումը: Հղիների, ծննդաբերների և ծննդկանների էկլամպսիան:

16. Հղության արգանդի արատների միջոցին: Հղության արգանդի անկանոն դիրքի միջոցին:

17. Հղի արգանդի վերքերը և պատռվածքները:

18. Արգանդի և նրա հավելումների բորբոքումները հղության միջոցին: Արտարգանդային հղություն:

19. Հղի արգանդի և չվարանների նորագոյացությունները:

20. Պլացենտայի /ընկերի/ արատները, բորբոքումը, ուռուցները և դեգեներատիվ պրոցեսները: Առաջադիր պլացենտան:

21. Բշտիկային կանգված: Ձվի ջրկալությունը: Պտղաջրի

պակասությունը:

22. Պորտալարի ծայրի կցումը, կարճությունը, յերկայնացումը, փաթաթումը և հանգույցները:

23. Վիժում: Մայրին վտանգը: Վաղաժամ ծննդաբերություն: Մոր մահը հղության կամ ծննդաբերության միջոցին:

24. Արգանդի թույլ, չափազանց ուժեղ և փնթարանդ կծկումներ: Ոսկրական փոքրուկ մասերի պատճառած խոչընդոտները ծննդաբերության:

25. Հավասարաչափ նեղ կոնք: Ջատարաչափ նեղ կոնք: Տափակ նեղ կոնք: Հավասարաչափ տափակ նեղ կոնք: Ռախիտիկ և օստեոմալյացիկ կոնքեր և այլն: Անկանոն կոնքերի վորոշումը: Կոնքաչափում:

26. Ծննդաբերության ընթացքը և մեխանիզմը նեղ կոնքերի դեպքերում: Պտղի գլխի չափափոխումը նեղ կոնքի դեպքում:

27. Պտղի անկանոն զարգացումը: Պտղի և նրա առանձին մասերի անհամեմատ մեծությունը:

28. Պտղի բեր դիրքը և նրա յերկարաձգված ձեվերը: Վաղաժամ շնչողական շարժումներ: Պտղի կարճելյալ և բնական մահը ծննդաբերության ժամանակ:

29. Պտղապարկի վաղաժամ և ուշացած պատռվելը:

30. Արյունահոսություն արգանդից ծննդաբերության ժամանակ և անմիջապես նրա վերջանալուց հետո: Արգանդի



դուրս շրջվելը:

31. Արգանդի, պարանոցի, հեշտոցի, արտաքին սեռական մասերի և շեքի պատռվածքները ծննդաբերության միջոցին:

32. Հետծննդյան վարակիչ հիվանդություններ /Ծննդացավեր/:

33. Ծննդկանների արյունահոսությունը: Արգանդի դիրքի հետծննդյան անկանոնությունները:

34. Ծննդականների ստինքների և պտուկների հիվանդությունները:

Մանկաբարձական ոպերացիաներ.

1. Արգանդի պարանոցի արհեստական լայնացումը.
2. Պտղապարկի արհեստական պատռելը.
3. Ծննդաբերության արհեստական հարուցումը.
4. Արհեստական վիժում.
5. Պտղաշրջում գլխից, կոնքից, հետույքից:
6. Պտղի ազատելը ձեռքով
7. Պտղի ազատելը աքցանով.
8. Պտղի ազատելը բութ կարթով և ծակավելով.
9. Պտղի գլխի ծակելը փոքրացումը.
10. Պտղի կրծքավանդակի և վորովայնի հատումը.
11. Կեսարյան հատումը:
12. Պորրոյի ոպերացիան
13. Հեշտոցային կեսարյան հատումը.

14. Վերակենդանացում արտարգանդային հղության դեպքում:

Յուրաքանչյուր ուսանող պարտավոր է ֆանտոմի վրա կատարել հետևյալ օպերացիաներից մեկը.

1. Պտղաշրջում ձեռքով արտաքին և ներքին յեղանակով.
2. Պտղա շրջում ձեռքով ներքին յեղանակով.
3. Պտղի ազատումը վոտքից ձեռքով.
4. " " հետույքից "
5. " " " բութ կարթով.
6. " " " ժապավենով.
7. Գլխի " աքցանով ծոծրակային դիրքի առաջային տեսակի դեպքում.
8. Գլխի ազատումը աքցանով ծոծրակային դիրքի հետին տեսակի դեպքում.
9. Գլխի ազատումը աքցանով դիմային դիրքի դեպքում.
10. Գլխի ազատումը աքցանով մարմինը ծնվելուց հետո.

## Գինեկոլոգիա

1. Արտաքին սեռական օրգանների զարգացման անկանոնությունները ու հիվանդությունները.
2. Հեշտոցի զարգացման արատները, նրա անցկությունը և փակումը.
3. Հեշտոցի ֆիստուլաները.



4. Հեշտոցի բորբոքումը.
5. " նորագոյացությունները.
6. Արգանդի զարգացման թերությունները.
7. " թեքումը դեպի զանազան կողմերը.
8. " դուրսընկնելը.
9. " կոռացումները.
10. " սուր և քրոնիկ բորբոքումը.
11. " լորձաթաղանթի բորբոքումը.
12. " ֆիբրոմիումները.
13. " վերիհեշտոցային ամպուտացիա.
14. " քաղցկեղը, սարկոմը և ադենոմը.
15. Արգանդահանումը հեշտոցից.
16. Ձվարանների զարգացման թերությունները և դիրքի անկանոնությունները.
17. Ձվարանների բորբոքումը.
18. " նորագոյացությունները.
19. Ովարիոտոմիա ցվարում.
20. Փողերի զարգացման արատները և դիրքի անկանոնությունները:

21. Փողերի բորբոքումը և նորագոյացությունները.
22. Մոտարգանդային կանյաշերտի բորբոքումը.
23. " պերիտոնեումի " .
24. Հետարգանդային արյունուռուց:

# ՌԵՆՏԳԵՆԵԼՈԳԻԱ

I Ֆիզիկա և տեխնիկա.

Ճառագայթների բնույթը: Կաթոդային և ռենտգենյան ճառագայթներ: Ցածր լարման էլեկտրականության աղբյուրներ: Տրանսֆորմատորներ: Դոզանէը չափող պրիբորներ: Ռենտգենյան խողովակներ: Ժամանակակից ապարատուրան. Հարմարություններ դիագնոստիկայի համար:

II Ընդհանուր ռենտգենոդիագնոստիկան.

Ռենտգենյան ճառագայթների անցումը տարբեր միջավայրերով: Ռենտգենյան հետազոտման տեխնիկան, /լուսավորում, նկարում/: Արհեստական կոնտրաստներ ստեղծելը: Օտար մարմինների վորոշումը: Ուսմունք պրոեկցիայի մասին: Ֆոտոտեխնիկա: Ռենտգենոդիագնոստիկայի նորագույն նվաճումները:

III Կրծքային վանդակում գտնվող օրգաններ.

Թոքերի, սրտի և անոթների նորմալ պատկերը: Սիրտը թեք դիրքում: Սրտի օրթոդիագրամման: Շնչառության և արյան շրջանառության օրգանների պաթոլոգիան.

IV Անդաստական օրգանների ռենտգենոդիագնոստիկան.

Նորմալ տվյալներ: Կերակրափող, ստամոքս, աղիքներ: Նրանց պաթոլոգիան: Խոլեցիստոգրաֆիա: Ռենտգենոդիագնոստիկան ուրոլոգիայում, գինեկոլոգիայում և մանկաբարձության մեջ: Ներկա նվաճումները:

V Ոսկորների և հոդերի հիվանդությունները:

VI Ընդհանուր ռենտգենոթերապիա.

Ապարատներ և պաշտպանական հարմարություններ թերապիայի համար: Ճառագայթների բիոլոգիական ազդեցությունը: Ճառագայթների ազդեցությունը մաշկի, արյան, արյունաստեղծ և գեղձային օրգանների վրա: Դոզիմետրիա: Ճառագայթների գործածության ցուցմունքներ /показания/ վիրաբուժության, ներքին հիվանդության, գինեկոլոգիայի և դերմատոլոգիայի մեջ:

## Ռենտգենոլոգիական կուրսերի ուսման պլանը.

I Ռենտգենոլոգիական պարապմունքները մեկ սեմեստրի ընթացքում տանելու համար հատկացված է մեկ թեորետիկ և յերկու գործնական ժամեր շաբաթական: Անհրաժեշտ թեորետիկ ժամերի քանակության պակասով ստիպված ենք սահմանափակել և անցնել ամենակարևոր բաները, սովորեցնել ուսանողներին կարողանալ վորոշել գլխավոր և հիմնական դիագնոստիկ հարցերը և ռենտգենոթերապիայի ցուցմունքները: Թեորետիկ դասախոսությունների հետ միաժամանակ ցուցադրվում են դիապոզիտիվներ և օրիգինալ ռենտգենոգրամմաներ: Ծրագրի ամեն մի գլխին հատկացվել ենք յերկու թեորետիկ ժամ: Հատուկ ուշադրություն կդարձնենք գործի պրակտիկ կողմի վրա, այսինքն ռենտգենոգրամմերի կարդալու:

II Գործնական աշխատանքները կտարվեն խմբակներով կազմված 7-8 մարդուց նկարագրված ծրագրի գլխավոր գլուխներով /նայել ծրագիրը/:

I Ֆիզիկա և քիմիա. այստեղ է մտնում նաև ռենտգենյան հետազոտման տեխնիկան.

II Կրծքային վանդակի օրգաններ.

III Մարսողական օրգաններ.

Պրակտիկ պարապմունքների համար կլինի կենդանի մատերիալ որևէ հարցի վերաբերյալ, որը կկայանա գլխավորապես լուսավորելու, նույնպես և նկարելու ու արտացոլված նկարները կարդալու մեջ:

Այսպիսով ամեն մի ուսանող հնարավորություն կունենա հաճախելու գործնական աշխատանքները ծրագրի գլխավոր հարցերում:

Ցերեկ ժամանակը կներդ համենայն դեպս, հարկավոր է ամեն ջանք թափել, որպեսզի գործնական աշխատանքները պարզվեն ծրագրի բոլոր բաժիններով: Ծրագիրը կազմելիս որոշված է հաշվի առնելու ժամանակի խիստ սահմանափակումը: Մի քանի բաժինները համառոտված են չափազանց մեծ խնայողությամբ լցված ռուսերեն ձեռնարկներին, իսկ մյուսների վերաբերյալ կկազմվեն կոնսպեկտներ. Ռենտգենոլոգիայի կուրսի անցնելը համար ենք գտնում 4-րդ կուրսում: Կուրսի քննությունը կկատարվի սրտագումների ձևով:

# ՆԵՐՎԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԼԻՆԻԿԱՆԵՐ

Ներվային հիվանդությունների կլինիկայի պրոպեդևտիկա և սիստեմատիկ կուրսը:

Այս կուրսում հաջորդաբար դասավանդվում են հետևյալ հիմնական բաժինները՝

1. Անատոմո-ֆիզիոլոգիական ներմուծում ներվային և հոգեկան կլինիկայի հանդերձ ցուցադրությամբ մակրո և միկրոսկոպիկ պրեպարատների, նկարների, սխեմաների և լուսանկարների:

2. Ներվային համակարգության ընդհանուր ախտորոշման ուսմունքը հանդերձ տոպիկ ախտորոշման նկատառումներով, ախտանշաբանությունով և հետազոտման ձևով գործնական աշխատանքով հիվանդների հետազոտման մեջ:

3. Ներվային համակարգության հիվանդությունների սիստեմատիկ կուրսի դասավանդումը հանդերձ ցուցադրությամբ համապատասխան հիվանդների:

4. Ամենատարական վերլուծում և ապագում կտրայիայի յենթարկված հիվանդների համապատասխան վերլուծությունը առողջ կուրսի ներկայությամբ: Այստեղ ուշադրությունը կենտրոնացված է հետազոտման և ընդհանուր ախտանշաբանության և ախտորոշման վրա:

## ՀՈԳԵԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԼԻՆԻԿԱՆԵՐԸ

I. IV կուրսի համար հոգեկան հիվանդությունների կլինիկայի պրոպեդևտիկական և սիստեմատիկ կուրսը:

Այս կուրսում հաջորդաբար դասավանդվում են հետևյալ հիմնական բաժինները:

1) հոգեբանական հիմունքները համառոտ փորձի, ռեֆլեքսոլոգիայի կամ պայմանական ռեֆլեքսների ուսմունք.

2) ընդհանուր հոգեախտաբանության հիմնական բաժինները:

3) հոգեկան հիվանդությունների ընդհանուր ախտանշաբանության հիմնական տվյալները:

4) հոգեկան հիվանդությունների սիստեմատիկ կուրսը հանդերձ ցուցադրությամբ համապատասխան հիվանդների:

5) գործնական աշխատանք հոգեկան հիվանդների ընդհանուր ախտանշաբանությունից և հետազոտման հիվանդների վրա ատենային խմբակների հետ ամբողջ կուրսի ընթացքում սեմինարական կարգով:



## ՆԵՐՎԱԽՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԳԱԽՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԾՐԱԳԻՐԸ

/4 կուրսի ուսուցման կամ քննության համար/

### Թեմա 1

Ներվային համակարգության նշանակությունը օրգանիզմի համար: Ներվային համակարգության կազմը և գործառնության ընդհանուր սկզբունքները, բիոգենետիկ ուսմունքի տեսակետից: Ներվաբանության պատմության գլխավոր շրջանները: Հոգեախտաբանության և հոգեբանության պատմության գլխավոր շրջանները:

### Թեմա 2

Ներվային համակարգության սաղմնաբանական և նորմալ անատոմիական բաժանումները և նրանց ընդհանուր նկարագիրը և գործնական ընդհանուր նշանակությունը:

### Թեմա 3

Ներվային համակարգության հյուսվածաբանական տարրերը: Ներվային բջիջները, նրանց տեսակները, կազմը, գործառնությունը և ընդհանուր պաթոլոգիան: Ներվային թելերը, նրանց կազմը, տեսակները, գործառնությունը և ընդհանուր ախտաբանությունը: Նեվրո հյուսվածքը, նրա կազմը, տեսակները, գործառնությունը և ընդհանուր ախտաբանությունը: Ներվային համակարգության մեջ գտնվող շարակցական հյուսվածքը, նրա կազմը, տեսակները և գործառնական ու-

ընդհանուր ախտաբանական նշանակությունը: Նեյրոնի և ֆիբրիլյար թեորիաները:

Թեմա 4

Արտակենտրոն նյարդային սիստեմի մակրո և միկրոսկոպիկ կազմը, հյուսվածքները, արմատային մասերը, ընդհանուր գործառնությունը և ախտաբանությունը: Ողնուղեղի մակրո և միկրոսկոպիկ կազմը և նրա անդրադարձային, հատվածային, /սեգմենտար/ և հաղորդչական գործառնությունները: Ողնուղեղի կենտրոնները և հաղորդչական ուղիների տեսակները և նրանց տեղերը ողնուղեղի տրամածության մեջ: Ողնուղեղի փոխհարաբերությունը ողնաշարի և ողերի հետ: Ողնուղեղի արյան և ավշի շրջանառությունը և նրա անոթները:

Թեմա 5

Յերկար ուղեղի, վարոլյան կամուրջի, ուղեղի կոթունի և թառաբլուրների մակրո և միկրոսկոպիկ կազմը, անդրադարձային և հաղորդչական գործառնությունը: Այդ տեղերում գտնվող նշանավոր կենտրոնները: Այդ տեղերից դուրս յելնող և այդ տեղերը մտնող գանգային նյարդերը, նրանց արմատները, հանգույցները, կենտրոնները /կորիզները/ և նյարդավորման օրգանները:

Թեմա 6

Միջնուղեղի /տեսաբլուրի, յենթատեսաբլուրի և մակուղեղի/ մակրո և միկրոսկոպիկ կազմը, վանդակային մասերը, այդ



մասերում գտնվող նշանավոր կորիզները և կենտրոնները, հաղորդչական և կապակցական ուղիները և նրանց գործառնական նշանակությունները: Յենթակեղևային հանգույցները /զոլավոր մարմնի կոպաչեք և պոչավոր կորիզների/ մակրո ու միկրոսկոպիկ կազմը և գործառնական նշանակությունները:

Ուղեղիկի մակրո և միկրոսկոպիկ մասը, նրա գործառնական նշանակությունը:

Էքստրապիրամիդային սիստեմը և նրա գործառնական նշանակությունը:

Թեմա 7

Ներքին պատիճի /Capsalainterna/ և շողավոր պսակի /Coronaradicta/ կազմը, մասերը, կապերը, հաղորդչական ուղիները և գործառնական նշանակությունը: Գանգուղեղի կեղևը և նրա վանդակային մասերը, նրա ակոսներն ու գալարները: Գանգուղեղի կեղևի մանրէադիտական արխիտեկտոնիկական դաշտերը:

Թեմա 8

Գանգուղեղի կեղևի գլխավոր կենտրոնները՝ զգայնության, շարժողության, տեսողության, լսողության, հոտառության, ճաշակի, բանավոր և գրավոր խոսքի և անցնական կյանքի ընթացքում վաստակած համակարգված սովորությունների և գործողությունների / praxia et gnosia/:

Նյարդային համակարգության զուգորդական, կապակցական և

հաղորդչական ուղիները, նրանց տեսակները և գործառնական նշանակությունները:

Կենտրոնաձիգ և կենտրոնախույս հաղորդչական ուղիները և նրանց գործառնական նշանակությունները ըստ տեսակների:

## Թեմա 9

Գանգուղեղի արյան և ավշի շրջանառությունը և նրա առանձնահատկությունները: Այդ առանձնահատկությունների ազդեցությունը գանգուղեղի ընդհանուր աշխատունակության վրա: Գանգուղեղի և ողնուղեղի թաղանթները և նրանց պաշտպանողական գործառնությունը գանգուղեղի և ողնուղեղի նկատմամբ:

## Թեմա 10

Վեգետատիվ նյարդային համակարգության կառույցը և ընդհանուր նշանակությունը օրգանիզմի համար: Սիմպատիկ և պարասիմպատիկ սիստեմները: Նրանց հակադրական գործառնությունը ընդհանուր առմամբ: Վեգետատիվ նյարդային համակարգության նշանակությունը նյութերի փոխանակության նկատմամբ: Նրա նշանակությունը գեղձերի, հյուսվածքների, օրգանների և մկանների նկատմամբ:

## Թեմա 11

Էնդոկրին համակարգության գեղձերի տեսակները, կառույցը, գործառնությունը: Էնդոկրին համակարգության ընդհանուր նշանակությունը օրգանիզմի համար: Էնդոկրին և նյարդային համակարգությունների փոխհարաբերությունները:



## Թեմա 12

Նյարդային համակարգության 3 գլխավոր գործառնությունները՝ ընկալող /աֆֆերենտ կամ զգայական/, կցորդական /կորելյացիոն կամ ինտեգրատիվ/ և էֆֆեկտոր /էֆֆերենտ կամ շարժողական/: Այդ գլխավոր գործառնություններին համապատասխանող 3 գլխավոր անատոմիական տարրերը-նեյրոնները՝ ընկալող, էֆֆեկտոր և կցորդական: Զգայունականություն /чувствительность/: Զգայում /ощущение/: ըմբռնում /восприятие/, հուշապատկերներ /образы воспоминания/: Զգացողություն /чувство/: Զգացողության ըմբռնման նախնական պայմանները: Մակերեսային զգայունականությունը՝ հպման կամ շոշափման զգացողություն, ցավի զգացողություն, ջերմաստիճանի զգացողություն: Այդ զգացողությունների վերաբերյալ գիտելիքները. Նրանց հետազոտության ձևերը և գործիքները: Նրանց խանգարման տեսակները և աշխատանքային նշանակությունը:

## Թեմա 13

Խոր օրգանների զգայունականությունը: Ճնշման, պասիվ շարժողության, ուժի /մկանային/ զգացողության էությունը, հետազոտության ձևերը և գործիքները, խանգարումները, նրանց տեսակները և աշխատանքային նշանակությունը:

Ներքին օրգանների /վիսցերոսենսոր անդրադարձում Head-ի գոտիները/, ոսկրների, մկանների և ներքին բու-ների զգայունականությունը: Զգայունականության բարդ տեսակները.

մարմնի և նրա մասերի դրության գիտակցությունը, տեղակորոշման կամ տեղի զգայողությունը, վիբրացիոն զգայողությունը, ստերեոգնոստիկ զգայողություն: Դրանց էությունը և հետազոտության ձևերը: Դրանց խանգարման ախտաբանական նշանակությունը:

Ցավերի դասավորումը. ծակծկող ցավեր, ռեֆլեկտոր ցավեր, այրող ցավեր, խայթիչ ցավ, մրմռող ցավ, կծկիչ ցավ և այլն և դրանց ախտաբանական նշանակությունը:

## Թեմա 14

Զգայնականության խանգարումներ մի քանի առանձին նշանակություն ունեցող տեսակները – Լասեգի ախտանիշը, Կերնիգի ախտանիշը, ծոծրակի մկանների ցավոտ լարման ախտանիշը: Նևրալգիա /Neuralgia/: Արմատային ցավ: Գլխացավ և նրա տեսակները ու ընդհանուր պատճառները: Ներքին օրգանների կրիզները: Զգայնականության դիսոցիացված խանգարում: Ցավի զգայողության հաղորդության դանդաղում: Ցավի զգայողության յերկարումը: Ջերմաստիճանի զգայնականության խեղաթյուրումը, կամ հակադարձ /պարադոքսալ/ դրությունը: Զգայնության խանգարումները ըստ առանձին կենտրոն ներվերի տիպի, ըստ արմատների տիպի, ըստ հյուսակների տիպի, ըստ ողնուղեղի տիպի /չորս յենթատիպեր/; ըստ յերկար ուղեղի և վարոլյան կամուրջի, գանգուղեղի կոճղի, տեսաթմբի, պատյանի և գանգուղեղի կեղևի տիպերի: Զգայնության



խանգարումները ըստ հիստերիկ տիպի:

## Թեմա 15

Զգայարանները՝ հոտառության, լսողության, տեսողության և ճաշակի գործարանները, դրանց անատոմիան և գործունեությունը, դրանց գործունեության հետազոտության ձևերը: Այդ գործունեության խանգարումները և դրանց կլինիկական նշանակությունը, հետազոտության ձևերը:

Վեստիբուլյար գործարանը, նրա անատոմիան, ֆիզիոլոգիան և պաթոլոգիան: Այդ գործարանի խանգարումների հետազոտության ձևերը:

## Թեմա 16

Հասարակ ռեֆլեքսները /անդրադարձումները/, դրանց տեսակները, անատոմիան, ֆիզիոլոգիան և պաթոլոգիան: Դրանց խանգարումները և հետազոտության ձևերը: Ջլային ռեֆլեքսները և դրանց կլինիկական նշանակություն ունեցող տեսակները: Վերնոսկրային ռեֆլեքսները: Մաշկային ռեֆլեքսներ և դրանց տեսակները: Լորձաթաղանթային ռեֆլեքսները: Ներքին օրգանների ռեֆլեքսները: Ախտաբանական ռեֆլեքսները և դրանց նշանակությունը:

## Թեմա 17

Շարժողության օրգանները. դրանց անատոմիան, ֆիզիոլոգիան, պաթոլոգիան և հետազոտության ձևերը:

Մկանների տոնուսը /լարվածականությունը/: Ակտիվ և պասիվ շարժողությունները: Մկանների սնուցումը: Մկանների տր

վորոշումը: Շարժողության կոորդինացիան: Ատաքսիա: Քայլվածքը:

## Դաս 18

Բերանացի և գրավոր խոսքը: Զգայնական և շարժողական գործառնությունների կեղևային ասոցիացիոն խանգարումները: Աֆազիա, ագնոզիա և ապրաքսիա: Սենսոր աֆազիա: Մոտոր աֆազիա: Ագրաֆիա: Ալեքսիա: Տրանսկորտիկալ սենսոր և մոտոր աֆազիա: Ամիմիա: Խոսքի արտասանման խանգարումներ՝ անարթրիա, դիզարթրիա, աֆոնիա, բուլբար արտահնչացումը. բրադիլալիա. վանգավորված խոսքը. կակազում կամ թլվատություն. վանգերի սայթաքումը:

Դեզգրաֆիկ խանգարումներ՝ պարետիկ, դողդոջ, ատակտիկ ջղաձգական դիր: Հիպերկինեզներ: Ներվերի և մկանների մեխանիկական և էլեկտրական գրգռելիությունը:

Գանգային շարժիչ ներվերը և նրանց անատոմիան, ֆիզիոլոգիան և պաթոլոգիան:

## Դաս 19

Վեգետատիվ ներվային համակարգության սիմպտոմատոլոգիա և հետազոտության մեթոդները: Վեգետատիվ ներվային համակարգության շարժողական գործառնությունները: Նրա սեկրետոր և տրոֆիկ գործառնությունները:

Վեգետատիվ ներվային համակարգության ռեֆլեքսները՝ Հերինգի, Չերմակի, Դանինի, Աշների, Էրբենի և Դանիելոպուլոյի: Վեգետատիվ ներվային համակարգության ֆարմակոդինամիկ



հետազոտության մեթոդները:

## Դաս 20

Ներվային համակարգության վերաբերյալ ռենտգենոդիագնոստիկան: Ողնուղեղ-գլխուղեղային հեղուկի վերաբերյալ գիտելիքները և նրա անատոմիան, ֆիզիոլոգիան, ստացման տեխնիկան, ֆիզիքական և քիմիական առանձնահատկությունները և հետազոտման գլխավոր մեթոդները: Նրա պաթոլոգիան և վերջինիս ախտանշական նշանակությունը: Ներվային համակարգության վերաբերյալ անամնեզը, ժառանգականության և ներկա տվյալների հավաքական առանձնահատկությունները և ամենանշանավոր կետերը: Գլխավոր անթրոպոմետրիկ տվյալների վերաբերյալ գիտելիքները: Ռենտգենոսկոպիայի ֆիզիքական նշանների վերաբերյալ գիտելիքները:

## Դաս 21

Ներվային համակարգության զուգորդական կամ հոգեկան գործառնությունը: Հոգեբանության հիմնական դրույթները: Հոգեբանության առարկան. հոգեբանության խոսքի նշանակությունը: Հոգեկան յերևույթները նյութական են: Արդի հոգեբանության առարկայի քննարկումը: Մարդու հակազդեցությունների վերաբերյալ գիտելիքները: Հակազդեցության յերևույթների վերլուծումը: Հոգեբանության խնդիրները: Գրգիռների վերաբերյալ հասկացողությունը: Վարքը կանոնավորող մեխանիզմների վերաբերյալ հասկացողությունը: Օրգանիզմի պատասխանական շարժողությունները՝ ի դեպս շրջավայրի գրգիռների:

հակազդեցությունների դասակարգումը: Մարդու վարքի ուսումնասիրման դիալեկտիկ մոտեցումը: Հոգեբանության մեթոդները: Հակազդեցությունների ուսումնասիրման հիմնական մեթոդները: Կլինիկական, հասարակ և էքսպերիմենտալ դիտողության մեթոդը: Համեմատական գենետիկ մեթոդը: Ինքնադիտողության և բանավոր հաշվետվության մեթոդը: Թեստերի մեթոդը: Անկետային մեթոդը:

## Դաս 22

Մարդու վարքը պայմանավորող գործոնները:

Սոցիալ գործոնների նշանակությունը: Յերկու հիմնական գործոններ: Սոցիալ գործոնների գերիշխող նշանակությունը: Մարդու վարքը սոցիալ պայմանների արդյունք է: Մարդկանց հասարակական վարքի նախասահմանումը /детерминированность/ սոցիալ պայմաններով: Մարդու գաղափարաբանության նախասահմանումը: Անհատական մարդու վարքի նախասահմանումը:

Մարդու վարքը պայմանավորող կենսաբանական գործոնները: Մարմնի կոնստիտուցիան /բնահատկությունը: Էնդոկրին համակարգության դերը:

Ներվային համակարգության՝ նրա ըմբռնողական մեխանիզմները: Պավլովի ռեֆլեկտոր աղեղը: Ըմբռնող օրգանները: Ռեցեպտորների սպեցիֆիկ էներգիայի օրենքը: Գրգռման վերին և ներքին շեմքը: Ներվային համակարգության հաղորդիչ և շրջափակող մեխանիզմները: Հաղորդիչ մեխանիզմի կազմի



թեորիաները: Ներվի մեկուսացյալ և յերկուկողմանի հաղորդականության օրենքը: Ներվային գրգռելիության էությունը: Ռեֆլեկտոր գործունության հիմնական սկզբունքները: Ներվային համակարգության գանգուղեղի կիսագնդերի գործունությունները: Գանգուղեղի կիսագնդերի կեղևը: Գանգուղեղի կիսագնդերի կեղևի նշանակությունը: Լոկալիզացիայի վերաբերյալ ուսմունքը: Գանգուղեղի կիսագնդերի գործունության հիմնական ուսմունքները: Էֆֆեկտոր մեխանիզմը: Վեգետատիվ ներվային համակարգությունը:

## Դաս 23

Մարդու հակազդեցությունների հիմնական հատկությունները: Հակազդեցությունների ամրացումը և վերհիշումը կամ հիշողությունը: Օրգանական նյութի գրգռելիությունը և պլաստիկականությունը: Հակազդեցությունների վերհիշումը: Հակազդեցությունների ամրացման և վերհիշման պայմանները: Անճշտություն հակազդեցությունների ամրացման և վերհիշման ընթացքում: Հակազդեցությունների ամրացման և վերհիշման էքսպերիմենտալ հետազոտության մեթոդները: Հետազոտության հետևանքները: Հակազդեցությունների ընթացքում գոյություն ունեցող վորոշ ուղղությունը կամ ուշադրությունը: Այդ ուղղության բնորոշումը, ֆիզիոլոգիական պատճառները, կանոնական տեսակները, գենեզիսը և էվոլյուցիան, էքսպերիմենտալ հետազոտության մեթոդները և հետևանքները:

Հակազդեցությունների կապը և ընթացքը: Հակազդեցություն-

ների կապի հիմնական նախադրույթները: Միաժամանակային հակադրությունների կապը և ընթացքը: Հաջորդող հակադրությունների կապը և ընթացքը: Հակադրությունների կապը ըստ գրգիռների նմանության սկզբունքի: Կողմնակի գործոնների ազդեցությունը հակադրությունների կապի և ընթացքի վրա:

## Թեմա 24

Ռեֆլեկտոր և ինստինկտիվ հակադրությունները:
Բնածին և վարժված հակադրություններ: Ռեֆլեկտոր հակադրությունները: Բնական /ինստինկտիվ/ հակադրությունների բնորոշումը: Բնական հակադրությունների բնորոշ հատկանիշները: Բնական հակադրությունները և ռեֆլեքսները: Բնածին հակադրությունները և պսիխիկան: Բնական հակադրությունների մեխանիզմը: Բնական հակադրությունների հետազոտման մեթոդները: Հույզմունքային /էմոցիոնալ/ հակադրություններ:
Հույզմունքային հակադրությունների բնորոշումը: Էմոցիոնալ հակադրությունների հիմնական բնորոշող հատկանիշները: Էմոցիոնալ հակադրությունների մեխանիզմը: Էմոցիոնալ հակադրությունների ընթացքում գոյություն ունեցող ֆիզիոլոգիկ և հոգեկան մոմենտների փոխհարաբերությունը:
Էմոցիոնալ հակադրությունների հետազոտման մեթոդները և հետևանքը:
Ինստինկտիվ և էմոցիոնալ հակադրությունների հիմնա-



կան տեսակները: Բնազդումների և հույզմունքների դաստիարակումը: Սնուցման բնազդումը և քաղցի հույզմունքը: Ինքնապաշտպանության բնազդումը և վախի ու բարկության հույզմունքը: Հոտի կամ հասարակական բնազդումը և համակրության հույզմունքները: Բազմացման բնազդումը և սեռական զգացմունքը:

## Թեմա 25

Վարժված հակադրությունները:
Վարժված հակադրությունների բնորոշումը: Վարժված հակադրությունների բնորոշող հատկանիշները: Վարժված հակադրությունների կապը բնածինների հետ: Վարժված հակադրությունների մեխանիզմները: Վարժված հակադրությունների հետազոտման մեթոդները և հետևանքները: Վարժված հակադրությունների հիմնական տեսակները: Վարժված հակադրությունների դասակարգումը: Ծայրամասների և բերանի մկանային-շարժողական հակադրությունները: Բանավոր կամ խոսքի հակադրություններ: Մտածողությունը և խոսքը:
Մարդկանց վարքի հիմնական տիպերը:
Մարդու վարքի ուսումնասիրման ամբողջական մոտեցումը: Խառնվածքների /темперамент/ և բնավորության /характер/ վերաբերյալ ուսմունքը: Վարքի տիպերի դասակարգման հիմնական սկզբունքները: Վարքի տիպերի դասակարգումը ըստ կենսաբանական հատկանիշների: Վարքի տիպերի բնո-

բուժումը բաց տիպային հարկաներում: Յուրաքանչյուր վարքի հիմնական գծերի ուսումնասիրման սխեման և մեթոդները:

## Դաս 26

Արտաքինական հոգեբանություն կամ հոգեախտաբանություն: Ընդհանուր հոգեախտաբանություն: Հոգեկան հիվանդությունների սիմպտոմատոլոգիա: Ըմբռնման և վերհիշողության կամ հիշողության խանգարումները: Հիպերմնեզիա, ամնեզիա և պարամնեզիա: Հիշողության բնածին և վաստակած խանգարումները: Հիշողության ընդհանուր թուլություն: Հիշողության աճող պակասումը: Պարբերական ամնեզիա: Ռետրո և անտերոգրադ ամնեզիա: Յերկրեսակի և բազմարեսակի հիշողություն: Ներշնչված ամնեզիա: Մասնակի ամնեզիա: Կեղծ վերհիշողության պատրանքները: Յերկրեսակի վերհիշողությունները կամ սխալ նմանեցումները: Կոնֆաբուլյացիաները: pseudologia phantastica. Սրված պայծառականություն և անհամաչափ ըմբռնումներ: Զգայությունների խանգարումներ: Անեսթեզիա: Գալլյուցինացիաներ և իլլյուզիաներ և նրանց որոշումը. նրանց բաժանումն ըստ զգայարանների: Հասարակ և բարդ գալլյուցինացիաներ: Իսկական գալլյուցինացիաներ: Գալլյուցինոիդները և նրանց բնորոշումը: Գալլյուցինացիաների բովանդակությունը: Ռեֆլեքսոգեն, պանորամիկ և ներշնչված գալլյուցինացիաներ: Գալլյուցիանտների արժեքականությունը /новязчивость/: Իլլյուզիաները, նրանց բնորոշումը և բաժանումը: Գալլյուցինացիաների



բովանդակության փոխհարաբերությունը հիվանդների հոգեկան դրությունից: Գալլյուցինացիաների օբյեկտիվ նշանները: Մտացածին գալլյուցինացիաներ: Գալլյուցինացիաների վերաբերյալ թեորիաները:

## Դաս 27

Աֆեկտային մտքերի և զգացումների վերաբերյալ հասկացողությունը: Աֆեկտային կասկածները: [illegible] ֆիլիսոփայություններ: Աֆեկտային գործողությունների պատճառները: Աֆեկտային մտքեր և նրանց պատճառները: Բնածին /косильственный/ և անպարզելի զգացումների վերաբերյալ հասկացողությունը: Աֆեկտային յերևույթների բնահատկությունները և նրանց պառանոյական միտքերի փոփոխման կարելիությունը: Աֆեկտային յերևույթների բնորոշումը ու ծագումը: Janet-ի կարծիքը և Freud-ի թեորիան այդ յերևույթների վերաբերյալ: Զառանցական մտքեր և յերևակայություններ: Զառանցական մտքերի բնահատկությունը, նրանց տեսակները ըստ բովանդակության, նրանց ծագման և զարգացման պայմանները և աղբյուրները: Ինդուկցված համակարգավորված զառանցական մտքեր: Զառանցանքի օբյեկտիվ նշաններ:

## Դաս 28

Զգայնոր պրոցեսների արտաքինական շեղումները: Էմոցիաների շեղումները հոգեկան առողջ և հիվանդ անձնավորությունների մոտ: Հոգեկան ցնցմունքի խանգա-

նան և վարական շեղումները: Հոգեկան գրգռելիության բարձրացումը: Դյուրագրգիռ թուլություն: Հոգեկան գրգռելիության նվազումը և հոգեկան զգայման բթությունը: Բարձր զգայման բթությունը: Խորային զգայման նվազումը և բացակայությունը: Էմոցիաների ուժի շեղումները: Ֆիզիոլոգիական և պաթոլոգիական աֆեկտները և նրանց բնութագրությունները: Պատասխանատվությունը ի դեպս պաթոլոգիական աֆեկտի: Ինչպիսի հիվանդագին պայմաններում են պատահում պաթոլոգիական աֆեկտները: Պաթոլոգիական աֆեկտների տեսակները: Ապաթիկություն, ատավիզմ, էպիլեպտիկ վճռականություն, պարանոիդ աֆեկտները: Հիվանդոտ անհոգության աֆեկտիվ յերկդիմություն: Տրամադրության հիվանդոտ բարձրացում: Էյֆորիա: Ընկճված տրամադրություն: Ապրումների բախում: Անհանգիստ-կասկածոտ տրամադրություն: Անտարբերական տրամադրություն և արտաքին ակտիվություններ: Համբերության զգացմունքի բարձրացումը և նվազումը: Անհարմար զգացմունքի գրգռելիության բարձրացումը: anaestheria dolorosa: Հոգեկան ինքնասպանություններ և վախեր:

## Դաս 29

Կամք և կամային պրոցեսը: Կամային և շարժումային շարժողությունները: Մղումների դրդապատճառների խանգարումները՝ աֆեկտներ, աֆեկտիվ յերկվորություն, վերջին խոսքի սխալանքը: Ձգտումների հիվանդագին շեղում-



ները: Ուշադրության և կենտրոնացման հիվանդագին շեղումները: Անձնական զգացմունքը և նրա հիվանդագին շեղումները: Պարտադրական արարքները, նրանց տեսակները և նշանակությունները:

## Դաս 30

Գիտակցությունը և նրա խանգարման կլինիկական տեսակները: Ինքնագիտակցությունը և նրա խանգարման տեսակները: Մարդու հոգեկան անգիտակցական շրջան և նրա վերաբերյալ գիտելիքները: Քունը և նրա խանգարումները: Յերազների վերաբերյալ գիտելիքները և յերազների խանգարումները հոգեկան հիվանդների մոտ: Հոգնելիության և հոգնածության վերաբերյալ գիտելիքները:
Հոգեկան հիվանդությունների ընթացքում տեղի ունեցող խանգարումները: Ներզատական համակարգության կողմից և նրանց տեսակները: Սրտի, արյան շրջանառության, շնչառության, մարսողական և միզասեռական օրգանների կողմից տեղի ունեցող խանգարումները հոգեկան հիվանդությունների ընթացքում:

## Դաս 31

Ներքնային և հոգեկան հիվանդությունների ընդհանուր էթիոլոգիան: Նախատրամադրող և արտադրող կամ դրսևորող պատճառները: Այդպիսի բաժանման նշանակությունը: Ընդհանուր և անհատական տրամադրություն: Սեռի, կուլտուրայի և քաղաքակրթության նշանակությունը

ներվային և հոգեկան հիվանդացման վրա: Պատերազմների նշանակությունը: Քաղաքական շարժումները և հեղափոխական շրջանները: Ցեղի և ազգության նշանակությունը: Զանազան ազգությունների մեջ պատահող ներվային և հոգեկան հիվանդությունների քանակական և որակական զանազանությունները: Կլիմայի նշանակությունը: Արվեստի նշանակությունը: Զինվորական ծառայությունը: Հասակի, սեռի և ընտանեկան դրության նշանակությունը: Էկզոգեն և էնդոգեն պատճառների վերաբերյալ գիտելիները:

Թեմա 32

Առողջ և պսիխոպատիկ կամ ներվոպատիկ ժառանգության վերաբերյալ գիտելիները: Այլասերման /դեգեներացիայի/ և վերածման /ռեգեներացիայի/ վերաբերյալ գիտելիները: Ժառանգականության վերաբերյալ արդի ուսմունքը ըստ Մենդելի և նրա նշանակությունը մարդու ախտաբանության վերաբերյալ: Մենդելիզմի նշանակությունը ներվախտաբանության և հոգեախտաբանության վերաբերյալ: Ժառանգականության զանազան ձևերը: Կոնստիտուցիայի վերաբերյալ գիտելիները: Պսիխոպատիկ ժառանգականության նշանակությունը զանազան տեսակ ներվային և հոգեկան հիվանդությունների վերաբերյալ: Հոգեկան հիվանդությունների ռեցեսիվ և դոմինանտ ժառանգավորման բնույթը: Պսիխոպատիկ և ներվոպատիկ կոնստիտուցիան և նրա ազդեցությունը ներ-



վային և հոգեկան հիվանդությունների հառաջացման և կլինիկական պատկերների վրա: Հանճարեղության և այլասերման կապի վերաբերյալ գիտելիները:

Թեմա 33

Արտադրող կամ դրսևորող պատճառներ՝ - հոգեկան տրավմա, բարոյական հարվածներ կամ ապրումներ: Freud-ի և Jung-ի ուսմունքը այդ հարցի վերաբերյալ: Հոգեկան վարակում, հոգնածություն, անկանոն կյանք, սեռական շեղումներ, խաղամոլություն, անքնություն, ֆիզիկական տրավմա, ֆիզիկական ուրիշ ֆակտորներ: Էնդոգեն և էկզոգեն թունավորումներ. ինֆեկցիոն հիվանդությունների նշանակությունը: Ներվային համակարգության և ներքին օրգանների հիվանդությունների դերի նշանակությունը: Ֆիզիոլոգիկ ֆակտորների էթիոլոգիկ նշանակությունները /դաշտանի, հղիության, ծննդաբերության, հետծննդաբերության և ծերության: Բանտարկության և պատերազմի նշանակությունը:

Թեմա 34

Ներվային և հոգեկան հիվանդությունների ընթացքի վերաբերյալ ընդհանուր գիտելիները: Ներվային և հոգեկան հիվանդությունների ախտաբանական անատոմիայի վերաբերյալ ընդհանուր գիտելիները: Ներվային և հոգեկան հիվանդությունների դասավորման և ախտորոշման ընդհանուր սկզբունքները: Ներվային և հոգեկան հի-

վանդների քննության ընդհանուր սկզբունքները և հիվանդության պատմության կազմելու ձևը:

## Թեմա 35

Ներվային և հոգեկան հիվանդությունների կանխման վերաբերյալ գիտելիքները: Ներվային և հոգեկան հիվանդների բուժման և խնամատարության կազմակերպման վերաբերյալ ընդհանուր գիտելիքները:

Ներվային և հոգեկան հիվանդությունների բուժման ընդհանուր սկզբունքները: Հոգեկան հիվանդանոցների նշանակությունը, անհրաժեշտությունը, տեսակները և առանձնահատկությունները:

## Թեմա 36

Ներվային և հոգեկան հիվանդությունների ընդհանուր թերապիայի մեթոդների վերաբերյալ գիտելիքները:

Ներվային և հոգեկան հիվանդությունների վիրաբուժական մեթոդները: Ներվային և հոգեկան հիվանդությունների որբապետրան:

Ներվային և հոգեկան հիվանդությունների ֆիզիոթերապևտիկ մեթոդները:

Ներվային և հոգեկան հիվանդությունների սերոթերապիան, որգանոթերապիան և մեդիկամենտոզ բուժումը:

Ներվային և հոգեկան հիվանդությունների սանատորային և կուրորտային բուժումը: Ներվային և հոգեկան հիվանդությունների աշխատաթերապևտիկ մեթոդները:



## Թեմա 37

Ներվային համակարգության պերիֆերիկ մասի տեղային հիվանդությունները: ընդհանուր տեսություն այդ մասի անատոմիայի, ֆիզիոլոգիայի և ընդհանուր պաթոլոգիայի:

Պերիֆերիկ ներվերի կամ ներվային բների բորբոքումը /Neuritis/: Ներվաբորբի վերաբերյալ ընդհանուր գիտելիքները: Մոնոնևրիտների վերաբերյալ գիտելիքները: Մի քանի օրինակներ՝ դեմային ներվի, ակնաշարժ ներվի, եռարմատ ներվի, նստային ներվի նևրիտների կլինիկական պատկերները, պատճառաբանությունը, ախտաբանաանատոմիան, ախտորոշումը, ընթացքը, ելքը և բուժման մեթոդները:

Ներվերի արմատների և հյուսակների բորբոքման վերաբերյալ գիտելիքները:

Պոլինևրիտների վերաբերյալ ընդհանուր գիտելիքները: Պոլինևրիտների օրինակներ — ալկոհոլի, կապարի, մկնդեղի, սնդիկի, շաքարայինի, ծննդաբերական, դիֆթերիական, սիֆիլիսից և բորոտի, պոլինևրիտների կլինիկական պատկերները, պատճառաբանությունը, ախտաբանաանատոմիան, ախտորոշումը, ընթացքը, ելքը և բուժման մեթոդները:

## Թեմա 38

Միալգիայի /մկանացավերի/ և միոզիտների /մկանաբորբ/ վերաբերյալ գիտելիքները:

Նևրալգիայի վերաբերյալ համառոտ արդի դրությունը: Նևրալգիայի օրինակներ — եռարմատ, ծոծրակային, միջ-

կողային, նստային և ուրիշ ներվերի նեվրալգիայի կլինիկական պատկերներ, պատճառախոսությունը, սիմպտոմատոլոգիան, ախտորոշումը, ընթացքը, ելքը և բուժման մեթոդները: Ծոծրակաուսային և գոտկա-սրբանային հյուսակների նեվրալգիաների վերաբերյալ գիտելիքները:

Meralgia paraesthetica հիվանդության վերաբերյալ գիտելիքները: Պերիֆերիկ ներվերի բների կրակոցային վնասվածքները, նրանց կլինիկական պատկերները, ընթացքները և օպերատիվ բուժման մեթոդները:

Պերիֆերիկ սիմպատիկ ներվերի վերաբերյալ գոյություն ունեցող օպերատիվ մեթոդները: Պերիֆերիկ ներվային բների ուռուցների վերաբերյալ գիտելիքները:

Դաս 39

Ողնուղեղի տեղային հիվանդությունները: Ընդհանուր նախնական տեղեկություն ողնուղեղի անատոմիայի, ֆիզիոլոգիայի և պաթոլոգիայի վերաբերյալ: Ողնուղեղի զարգացման արատները և նրանց կլինիկական նշանակությունները: Ողնուղեղի բորբոքումը /Myelitis/: Նրանց ձևերը, պատճառախոսությունը, սիմպտոմատոլոգիան, ախտորոշումը, ընթացքը, ելքը և բուժման մեթոդները: Ողնուղեղի արյան շրջանառության խանգարումներից առաջացած հիվանդությունները: Նրանց պատճառախոսությունը, սիմպտոմատոլոգիան, ախտորոշումը, ընթացքը, ելքը և բուժման մեթոդները:



Դաս 40

Ողնաշարի հիվանդություններից առաջացած ողնուղեղի հիվանդագին շեղումները: Ողնաշարի պալարախտի, կանկերի, ուրիշ ուռուցների, սիֆիլիսի, տիֆոզ բորբոքման ախտաբանական նշանակությունը այդ հարցում: Այդ պատճառներից առաջացած հիվանդությունների կլինիկական պատկերները, ախտորոշումը, ընթացքը, ելքը և բուժման մեթոդները: Ողնաշարի փայտացման հիվանդությունը /Spondylose rizomélique/ նրա ձևերը, պատճառախոսությունը, սիմպտոմատոլոգիան, ախտորոշումը, ընթացքը, ելքը և բուժման մեթոդները:

Ողնուղեղի ուռուցները, նրանց ձևերը, պատճառախոսությունը, սիմպտոմատոլոգիան, ախտորոշումը, ընթացքը, ելքը և բուժման մեթոդները: Ողնուղեղի վնասվածքները ըստ պատճառախոսության, նրանց կլինիկական պատկերը, ախտորոշումը, ընթացքը, ելքը և բուժման մեթոդները:

Դաս 41

Գանգուղեղի տեղային հիվանդությունները: Ընդհանուր տեղեկություն գանգուղեղի անատոմիայի, ֆիզիոլոգիայի, արյան և ավշի շրջանառության, ընդհանուր ախտաբանության վերաբերյալ: Գանգուղեղային ընդհանուր և [illegible] տեղային ախտանիշերի վերաբերյալ գիտելիքները:

Գանգուղեղի զարգացման արատները և նրանց կլինիկական նշանակությունը:

Գանգուղեղի վնասվածքները, նրանց ձևերը ըստ պատ-

ծառախտություն, նրանց կլինիկական պատկերը, ախտորոշումը, ընթացքը, բուժման մեթոդները և վերջնական ելքը:

Գանգուղեղի ցնցումի վերաբերյալ գիտելիքները:

Գանգուղեղի ցնցումների վնասվածքի ընթացքում գոյություն ունեցող հոգեկան հիվանդությունների վերաբերյալ գիտելիքները:

### Թեմա 42

Գանգուղեղի բորբոքումները, նրանց հիմնական տեսակները, նրանց պատճառաբանությունը, ախտամորֆոլոգիան, ախտորոշումը, ընթացքը, բուժման մեթոդները և ելքը:

Երեխայական ուղեղային պարալիչների վերաբերյալ գիտելիքները և նրանց կլինիկական պատկերների հիմնական տեսակները, պատճառաբանությունը, ախտորոշումը, ընթացքը և բուժման մեթոդները:

Գանգուղեղի թարախակույտը, նրա պատճառաբանությունը, կլինիկական պատկերի տեսակները, ախտորոշումը, ընթացքը, բուժման մեթոդները և ելքը:

### Թեմա 43

Գանգուղեղի արյան շրջանառության խանգարումները՝ արյունահոսություն, թրոմբոզ, էմբոլիա, արտերիոսկլերոզ. նրանց պատճառաբանությունը, կլինիկական պատկերը, ախտորոշումը, ընթացքը, բուժման մեթոդները և ելքը:

Գանգուղեղի խորշերի թրոմբոզի վերաբերյալ գիտելիքները:

Գանգուղեղի ուռուցքները, նրանց տեսակները, պատճառաբանությունը, կլինիկական պատկերը, ախտորոշումը, ընթացքը,



բուժման մեթոդները և ելքը:

Գանգուղեղի պարազիտների վերաբերյալ գիտելիքները:

Ուղեղիկի քրոնիկ դիֆուզ հիվանդությունները:

### Թեմա 44.

Ուղեղ-վողնուղեղային թաղանթների հիվանդությունները: Ընդհանուր տեսություն անատոմիայի, ֆիզիոլոգիայի և ընդհանուր պաթոլոգիայի վերաբերյալ: Նրանց պահպանողական նշանակությունը կենտրոնական ներվային համակարգության վերաբերյալ: Յուրենց հիվանդությունները, նրանց տեսակները, կլինիկական պատկերները, ախտորոշումը, ընթացքը, բուժման մեթոդները և ելքը:

Կոպտանային և նրբենի պատյանների հիվանդությունները, նրանց տեսակները, կլինիկական պատկերը, ախտորոշումը, ընթացքը, բուժման մեթոդները և ելքը:

Միլիարային ուղեղ-վողնուղեղային լեպտոմենինգիտ, նրա էթիոլոգիան, ախտամորֆոլոգիան, ախտորոշումը, ընթացքը և ելքը:

### Թեմա 45

Ներվային համակարգության ընդհանուր օրգանական հիվանդությունները: Կողմնային ամիոտրոֆիկ սկլերոզ, ուղեղ-վողնուղեղային բազմաջանակ սկլերոզի, սիրինգոմիելիայի, սիրինգոբուլբիայի, հեմատոմիելիայի վերաբերյալ գիտելիքները: Նրանց պատճառաբանությունը, ախտամորֆոլոգիան, ախտորոշումը, ընթացքը, բուժման մեթոդները և ելքը:

## Դաս 46

Ներվային համակարգության սիֆիլիսային հիվանդությունները: Նեյրոլյուեսի վերաբերյալ նախնական ընդհանուր գիտելիքները: Ուղեղ-ողնուղեղային սիֆիլիսը: Նրա էտիոլոգիան, ախտաբանական անատոմիան, կլինիկական պատկերների ձևերը: Մենինգեալ սիմպտոմոկոմպլեքս, մենինգոմիելիտիկ սիմպտոմոկոմպլեքս, միելիտիկ սիմպտոմոկոմպլեքս, որա միջաձիգային և դիֆուզ ձևերը: Գանգուղեղի մենինգիտ և մենինգոէնցեֆալիտ ձևերը: Նեյրոլյուեսի դիֆուզ էնցեֆալոմիելիտ ձևերը: Նեյրոլյուեսի ինսուլտային սիմպտոմոկոմպլեքսները - մոնոհեմի - պարապլեգիկ սիմպտոմոկոմպլեքսները: Նեյրոլյուեսի ստրիոպալլիդար, ստրիոթալամիկ, կեղևային, ցերեբելյար և բազմատեսակ սկլերոզ սիմպտոմոկոմպլեքսները: Նեյրոլյուեսի հոգեախտաբանական սիմպտոմոկոմպլեքսները: Սիֆիլիսին ախտորոշ. վերաբերյալ գիտելիքները: Պերիֆերիկ ներվային համակարգության սիֆիլիսի ձևերը:

## Դաս 47

Նեյրոլյուեսի ամիոտրոֆիկ սիմպտոմոկոմպլեքսը: Նեյրոլյուեսի կոմբինացված սիստեմային ձևերը: Կողմնային սկլերոզ: Ողնուղեղի չորացում /tabes dorsalis/: Նրա էթիոլոգիան, ախտաբանական անատոմիան, կլինիկական պատկերի զանազան ձևերը: Սիմպտոմատոլոգիան և ախտանիշերի պաթոգենեզը, ընդհանուր և մասնավոր ախտորոշումը, ընթացքը, պրոգնոզը, բուժման մեթոդները և վերջնական ելքը:



## Դաս 48

Պրոգրեսիվ պարալիչը: Նրա պատճառագիտությունը, ախտաբանական անատոմիան, սիմպտոմատոլոգիան, կլինիկական պատկերների զանազան ձևերը, ընդհանուր և մասնավոր ախտորոշումը, պրոգնոզը, բուժման մեթոդները, ընթացքը և վերջնական ելքը:

Վեգետատիվ ներվային համակարգության սիֆիլիսի վերաբերյալ գիտելիքները:

Էնդոկրինային սիֆիլիսի վերաբերյալ գիտելիքները:

Ներվային համակարգության բնածին սիֆիլիսի վերաբերյալ գիտելիքները:

## Դաս 49

Ներվային համակարգության սուր վարակիչ հիվանդությունների վերաբերյալ ընդհանուր գիտելիքները: Heine Medin-ի հիվանդությունը, նրա էթիոլոգիան, ախտաբանական անատոմիան, սիմպտոմատոլոգիան, կլինիկական պատկերի զանազան ձևերը, ընդհանուր և մասնավոր դիագնոզը, պրոգնոզը, բուժման մեթոդները, ընթացքը և վերջնական ելքը:

Chorea minor - հիվանդությունը, նրա էթիոլոգիան, ախտաբանական անատոմիան, սիմպտոմատոլոգիան և ախտանշերի պաթոգենեզը, կլինիկական պատկերի զանազան

ձևակները, ախտորոշումը, տարբերական ախտորոշումը, բուժման միջոցները, ընթացքը, վերջնական ելքը և բարդությունների կարևորությունը:

Դաս 50

Encephalitis epidemica հիվանդությունը. Նրա համառոտ պատմությունը, էպիդեմիոլոգիան, էթիոլոգիան, ախտաբանական անատոմիան, սիմպտոմատոլոգիան, կլինիկական պատկերի զանազան ձևերը, ախտանիշերի պարզումը: Ընդհանուր և տարբերական սիմպտոմատոլոգիան, պրոգնոզը, ընթացքը, բուժման միջոցները և վերջնական ելքը:

Պարկինսոնի սինդրոմի վերաբերյալ գիտելիքները:

Paralysis agitans հիվանդությունը և նրա տարբերությունը վերոհիշյալ հիվանդության հետ:

Էպիդեմիկ ցերեբրոսպինալ մենինգիտ հիվանդությունը: Նրա էթիոլոգիան, ախտաբանական անատոմիան, սիմպտոմատոլոգիան, կլինիկական պատկերի զանազան ձևերը, ախտանիշերի պարզումը, դիագնոզը, պրոգնոզը, ընթացքը, բուժման միջոցները և վերջնական ելքը:

Դաս 51

Tetanus հիվանդությունը. Նրա էթիոլոգիան, ախտաբանական անատոմիան, սիմպտոմատոլոգիան, կլինիկական պատկերի զանազան ձևերը, դիագնոզը, պրոգնոզը, ընթացքը, բուժման միջոցները և ելքը:



Lyssa humanum հիվանդությունը. Նրա էթիոլոգիան, ախտաբանական անատոմիան, սիմպտոմատոլոգիան, կլինիկական պատկերի զանազան ձևերը, դիագնոզը, պրոգնոզը, ընթացքը, բուժման միջոցները և ելքը: Այդ հիվանդության կանխումը, անհրաժեշտ ներարկումներով, անհրաժեշտ ներարկումներից առաջացած ներվային և հոգեկան հիվանդությունների վերաբերյալ գիտելիքները:

Դաս 52

Ինֆեկցիոն-վարակիչ հիվանդությունների ընթացքում տեղի ունեցող ներվային և հոգեկան խանգարումների վերաբերյալ գիտելիքները:

1. Արտակենտրոն ներվերի բների խանգարումները այդ հողի վրա – մոնոպոլինևրիտները, ռադիկուլիտները:
2. Ողնուղեղային հիվանդությունները այդ հողի վրա:
3. Գլխուղեղային հիվանդությունները այդ հողի վրա:
4. Ուղեղ-ողնուղեղային թաղանթների հիվանդությունները այդ հողի վրա:

Սուր-վարակիչ հիվանդությունների ընթացքում տեղի ունեցող հոգեկան խանգարումների վերաբերյալ գիտելիքները:

Այդ տեսակ հոգեկան խանգարումների էությունը:
Այդ տեսակ հոգեկան խանգարումների դասակարգումը:
Ամենտային զառանցանք: Ինֆեկցիոն զառանցանք:
Սուր-զառանցանք /delirium acutum/: Հոգեկան

թուլության ինֆեկցիոն դրությունները:

## Դաս 53

Ներվային /և հոգեկան/ համակարգության ինտոքսիկա-ցիոն հիվանդությունների գիտելիքները: Ներվային և հոգե-կան հիվանդությունները ալկոհոլիզմի հողի վրա: Նրանց տեսակները, կլինիկական պատկերները պաթոլոգո-անատոմիա-կան փոփոխությունները, ախտորոշումը, պրոգնոզը, սոցիալա-կան նշանակությունը, բուժման մեթոդները, ընթացքը և ելքը:

Ներվային և հոգեկան հիվանդությունները մորֆինիզմի և կոկաինիզմի հողի վրա և նրանց վերաբերյալ գիտելիքները:

Ներվային և հոգեկան հիվանդությունները ուրիշ սուր և քրոնիկ էկզոգեն թունավորումների հողի վրա և նրանց գիտելիքները:

## Դաս 54

Ներվային և հոգեկան խանգարումները օրգանիզմի էնդոգեն թունավորումների ընթացքում և նրանց վերա-բերյալ գիտելիքները:

Ինչպիսի խանգարումները նյութերի փոխանակության շեղումների ընթացքում:

Ինչպիսի խանգարումները էնդոկրին համակարգության շեղումների ընթացքում:

Ուժասպառության ախտանիշների վերաբերյալ գիտելի-ները: Հասարակ ասթենիա: Սուր անմտություն /Amentia/

Ներվային և հոգեկան շեղումները ներքին օրգանների հիվանդությունների ընթացքում և նրանց վերաբերյալ ընդհա-նուր գիտելիքները:

## Դաս 55

Էնդոկրին համակարգության գեղձերի գործառնության խանգարումներից առաջացած հիվանդությունների վերաբե-րյալ գիտելիքները:

Վահանագեղձի խումբ: Բազեդովյան հիվանդությունը, նրա էթիոլոգիան, պաթոգենեզը, սիմպտոմատոլոգիան, կլի-նիկական պատկերի զանազան տեսակները. դիագնոզը, պրոգնոզը. ընթացքը. բուժման զանազան մեթոդները և ելքը:

Միքսեդեմիա հիվանդությունը. Նրա էթիոլոգիան, պաթո-գենեզը, սիմպտոմատոլոգիան կլինիկական պատկերի զանա-զան տեսակները, դիագնոզը. պրոգնոզը, բուժման մեթոդ-ները. ընթացքը և ելքը:

Էնդեմիկ և սպորադիկ կրետինիզմի վերաբերյալ գիտե-լիքները:

## Դաս 56

Հարվահանագեղձի գործառնության խանգարումների վերաբերյալ գիտելիքները: Տետանիա հիվանդությունը. նրա էթիոլոգիան, սիմպտոմատոլոգիան, կլինիկական պատկերների զանազան տեսակները, ախտանիշերի պա-թոգենեզը, ախտորոշումը, պրոգնոզը, բուժման մեթոդ-ները, ընթացքը և վերջնական ելքը:

Սպազմոֆիլ դիաթեզ. կրածնի փոխանակության վե-

բերյալ գիտելիքները:

Հիպոֆիզիար խմբակ: Ակրոմեգալիա, գիգանտիզմ, հիպոֆիզար գիրության և հյուծության և diabetes insipidus հիվանդությունների վերաբերյալ գիտելիքները. նրանց էթիոլոգիան. կլինիկական պատկերը, ախտանիշերի պաթոգենեզը, ախտորոշումը, պրոգնոզը, բուժման միջոցները, ընթացքը և վերջնական ելքը:

Թեմա 57

Վերերիկամային գեղձերի գործառնության խանգարումներից առաջացած հիվանդությունների վերաբերյալ գիտելիքները:

Ադիսոնյան կամ բրոնզե հիվանդության վերաբերյալ գիտելիքները, նրանց էթիոլոգիան, ախտամորֆոլոգիան, կլինիկական պատկերի վաղական նշանները, ախտորոշումը, պրոգնոզը, բուժման միջոցները և ելքը:

Սեռային գեղձերի էնդոկրին գործառնության խանգարումների վերաբերյալ գիտելիքները:

Ուրցագեղձի գործառնության խանգարումների վերաբերյալ գիտելիքները:

Բազմագեղձ խանգարումների վերաբերյալ գիտելիքները:

Նայֆեսկի խանգարումների վերաբերյալ գիտելիքները:

Թեմա 58

Վեգետատիվ նյարդային համակարգության հիվանդությունների վերաբերյալ գիտելիքները:

Անգիոնևրոզները և նրանց վերաբերյալ գիտելիքները:

Վեգետատիվ նյարդային համակարգության նշանակությունը նյութերի փոխանակության և այդ սիստեմի խանգարման դեպքում: Վազոմոտոր և սեկրետոր նևրոզների վերաբերյալ գիտելիքները:

Վազոմոտոր-տրոֆոնևրոզների վերաբերյալ գիտելիքները:

Raynaud-ի հիվանդություն: Ակրոպարեստեզիա: Ակրոասֆիքսիա: Էրիթրոմելալգիա: Սկլերոդերմիա: Սուր սահմանափակ այտուց: Նևրոտրոֆիկ-մաշկային բազմապատիկ գանգրեններ: Claudicatio-intermittens. Herpes zoster. Myasthenia gravis pseudoparalytica.

Թեմա 59

Նյարդային համակարգության ժառանգական-ընտանեկան հիվանդությունների վերաբերյալ գիտելիքները և նրանց դասակարգումը: Diplegia կամ paraplegia. Spastica familiales. Ataxia hereditaria Friedreich-ի. Պրոգրեսիվ մկանային ատրոֆիայի նեյրալ տեսակներ /Charcot-Marie/, Dystrophia musculorum progressiva. Amyotonia congenita. Myotonia congenita - Sclerosis lateralis amyotrophica.

Վիլսոնի հիվանդությունը, պսևդոսկլերոզ. տորսիոն սպազմ Հյունտինգտոնյան խորեան և այլն:

Թեմա 60

Նյարդային համակարգության ֆունկցիոնալ հիվանդություն-

ների վերաբերյալ գիտելիքները:

Այդ հիվանդությունների պաթոգենետիկ բուժման վերաբերյալ գիտելիքները: Նեֆրոնեֆրոզների և պիելոնեֆրիտների խմբավորումը: Դրանց վերաբերյալ համառոտ պատմությունը, դրանց էթիոլոգիան, սիմպտոմատոլոգիան, կլինիկական պատկերների կանոնական տեսակները. դիագնոզը, պրոգնոզը, բուժման մեթոդները, ընթացքը և ելքը: Maladiodestics հիվանդությունների վերաբերյալ գիտելիքները:

Թեմա 61

Նեֆրիտների խմբավորումը, նրա համառոտ պատմությունը, նրա սիմպտոմատոլոգիան, կլինիկական պատկերի կանոնական տեսակները, ախտանիշների պաթոգենեզը: Նեֆրիտների հատկացումն և նեֆրոզների կոմպենսացիայի վերաբերյալ գիտելիքները: Նեֆրիտների ընդհանուր և մասնավոր ախտորոշումը, պրոգնոզը, բուժման և կանխման կանոնական մեթոդները, սոցիալական նշանակությունը:

Թեմա 62

Արյան ստեղծող համակարգի ներքային էնդոկրին հիվանդությունների վերաբերյալ գիտելիքները: Արյան ամբողջության ներքային օրգանների հիվանդությունների վերաբերյալ: Արյան բջջային էնդոկրին ախտաբանական գործոն: Արյան ախտերի պատկերները և դրանց վերաբերյալ գիտելիքները: Արյանային պաթոնեֆրոզի վերաբերյալ գիտելիքները: Այդ հարցի համառոտ պատմությունը, այդ հիվանդության էթիո-



լոգիան, սիմպտոմատոլոգիան, կլինիկական պատկերի կանոնական տեսակները, պաթոգենեզը, ախտորոշումը, ընթացքը, բուժման մեթոդները և ելքը:

Հիվանդի չգործնական մեթոդի նշանակությունը, այդ հիվանդության կլինիկական պատկերի և ընթացքի վերաբերյալ:

Թեմա 63

Ինֆեկցիոն պարխոտայի խմբակը և դրա վերաբերյալ գիտելիքները: Պարխոտայի հակազդեցությունների վերաբերյալ գիտելիքները: Պարխոտայի անզգայացումների վերաբերյալ գիտելիքները: Սեպտիկ պարխոտաներ: Քրոն գործոնը անզգայացումներ: Անկայուն անզգայացումներ: Խմբային պարխոտաներ: Կոկային պարխոտաներ: Սուր խոսող և սրբիկա պարխոտաներ: Համարժեքային թշնամի պարխոտաներ:

Բարոյական խելագարություն: Խմբային խելագարություն և այլն: Պարխոտաների սոցիալական և դատաբժշկական նշանակությունը:

Թեմա 64

Ցիկլոֆրենիայի խմբակը: Ցիկլոթիմիկ կոնստիտուցիայի վերաբերյալ գիտելիքները: Ցիկլոֆրենիայի մանիակալ, մելանխոլիկ, ցիկլոթիմիա և դիպսոմանիա տեսակները: Դրանց էթիոլոգիան, սիմպտոմատոլոգիան, կլինիկական միավորության վերաբերյալ համառոտ պատմությունը. կլինիկական պատկերի կանոնական տեսակները, ախտորոշումը, պրոգնոզը, բուժման մեթոդները, ընթացքը, սոցիալական և դատաբժշկական

նշանակությունը:

## Թեմա 65

Ֆրոնիկ պարանոյայի վերաբերյալ գիտելիքները: Նրա համառոտ պատմությունը, էթիոլոգիան, սիմպտոմատոլոգիան, կլինիկական պատկերի զանազան տեսակները, ախտորոշումը, պրոգնոզը, բուժման մեթոդները, ընթացքը, սոցիալական և դատա-բժշկական նշանակությունը, ևլն:

## Թեմա 66

Շիզոֆրենիա խմբակի վերաբերյալ գիտելիքները: Այդ խմբակի համառոտ պատմությունը, բնորոշ ախտանիշերը, կլինիկական պատկերը և կլինիկական պատկերի զանազան տեսակները. ախտորոշումը, պրոգնոզը, ընթացքը, սոցիալական և դատա-բժշկական նշանակությունը, բուժման մեթոդները, ընթացքը և ևլն:

## Թեմա 67

Էպիլեպսիայի խմբակը: Նրա համառոտ պատմությունը: Էպիլեպսիայի կլինիկական տեսակները և այդ տեսակների կլինիկական պատկերները, ախտորոշումը, պրոգնոզը, ընթացքը, բուժման զանազան մեթոդները, պրոֆիլակտիկան, խնամատարության հարցը. սոցիալական և դատա-բժշկական նշանակությունը:

## Թեմա 68

Օլիգոֆրենիայի խմբակը: Այդ խմբակի կլինիկական տեսակները: Այդ տեսակների կլինիկական առանձնահատկությունները:



Նրանց էթիոլոգիան, սիմպտոմատոլոգիան, ախտանշաբանությունը, դիագնոզը, պրոգնոզը, ընթացքը, բուժման և դաստիարակության մեթոդները, ևլն:

Դեֆեկտիվ երեխաների դաստիարակման հարցի վերաբերյալ գիտելիքները:

## Թեմա 69

Դատական հոգեախտաբանության վերաբերյալ ընդհանուր գիտելիքները: Այդ հարցի պատմական զարգացման համառոտ տեսությունը: Այդ հարցի հիմնական սկզբունքների վերաբերյալ գիտելիքները:

Դեռահաս վոճրագործների հարցի վերաբերյալ գիտելիքները:

## Թեմա 70

Աշխատանքի կազմակերպության վերաբերյալ գիտելիքները: Արհեստի ընտրության վերաբերյալ գիտելիքները: Պսիխոտեխնիկայի վերաբերյալ գիտելիքները: Պրոֆեսիոնալ հիվանդությունների վերաբերյալ գիտելիքները: Պրոֆեսիոնալ նևրոզների վերաբերյալ գիտելիքները: Աննորմալ օդային ճնշումից, բարձր աստիճանի ջերմությունից, էլեկտրական էներգիայից, թունավորումներից հառաջացած հիվանդությունների վերաբերյալ գիտելիքները:

Ներվային համակարգության հիվանդությունների ընդհանուր կանխման կամ բուժման ընդհանուր սկզբունքները:

Ներվային համակարգության [illegible] պրոֆիլակտիկայի ընդհանուր սկզբունքները:

## Դասագրքեր և ձեռնարկներ՝

1. М.И. Астваџатуров: Краткий учебник нервных болезней Հրատ.
2. Г.И. Россолимо - Курс нервных болезней Հրատ.
3. Корнилов - Учебник психологии Հրատ.
4. Кречмер - Медицинская психология Հրատ.
5. Павлов - Функция головного мозга.
6. Бехтерев - Общие основания рефлексологии
7. Гуревич и Серейский Учебник психиатрии
8. Осипов - Курс психиатрии.



## ԿԱՇՎԻ ՅԵՎ ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ներկա ակադեմիական կուրսում, IV-րդ կուրսի ուսանողների, ամեն շաբաթական 3 ժամ թեորետիկ պարապմունքների համար և 6 ժամ գործնական աշխատանքների համար:

Թեորետիկ պարապմունքների բովանդակությունը և ժամերի բաշխումը հետևյալն է՝ ինչպես հաշվի առնենք, որ ամբողջ կուրսին նվիրված է սիֆիլիսին, փափուկ շանկրին և կաշվի հիվանդությունների մի մասին, 78 ժամից սիֆիլիսին հատկացված 52 ժամ, 2 ժամ փափուկ շանկրին և 24 ժամ կաշվի հիվանդություններին:

Կաշվի և վեներական հիվանդությունների թեորետիկ պարապմունքները կարող բաժանված է 2 մասի:

I-ին վեներական հիվանդություններ.

ա) սիֆիլիս, բ) փափուկ շանկր և գ) սեռական վեներական հիվանդություններ:

II-րդ կաշվի հիվանդություններ.

1. Սիֆիլիսի ուսմունքը: Պատմական տեղեկություններ

ա) հիվանդության կոչումը, ծագումը, տարածման պայմանները ու յեղանակները

բ) Էկսպերիմենտալ սիֆիլիս

2. Սիֆիլիսի բնույթագիրը, վորպես սոցիալական չարիքի, նրա տարածումը կապիտալիստական յերկրներում և մասնավորապես

Նայարանում:

3. Սիֆիլիսի դինամիկան և նրա կապը կենցաղային ընդհանուր յերևույթների հետ, հասարակական նշանակություն ունեցող ուրիշ գործոնների հետ:

4. Հիվանդության էվոլյուցիան և կլինիկան /ներքին գործարանների /վիսցերալ/ սիֆիլիսի, նյարդային համակարգության սիֆիլիսի մասին, կարևոր միայն ընդհանուր հասկացողություններ, յենթադրելով վոր այս հարցերի հետ ուսանողները ծանոթ են համապատասխան կլինիկաների դասախոսություններից/.

5. Սիֆիլիսի սերոլոգիայի ռեակցիաների մասին, ընդհանուր տեղեկություններ.

6. Սիֆիլիսի բուժումը շրջաններ, յուրաքանչյուր շրջանի բնույթագիրը, բարդված և չարորակ սիֆիլիս:

7. Կոնստիտուցիայի դերը պաթոլոգիայի մեջ, արտաքին գործոնների նշանակությունը. սիֆիլիսի ընթացքի համար /կլիմա, կյանքի պայմաններ, պրոֆեսիան և այլն/.

8. Հասկացողություն իմմունիտետի մասին. բժշկվելու կրիտերին, հասկացողություն գերինֆեկցիայի և ռեինֆեկցիայի մասին.

9. Մանկական հասակի սիֆիլիսը, բնածին և ուշացած, բնածին սիֆիլիսի ախտորոշումը.

10. Սիֆիլիսի պրոֆիլակտիկական-հասարակական և անձնական դիսպանսերացիա.

11. Սիֆիլիսի բուժումը. կոնստիտուցիայի դերը սիֆիլիսի բուժման մեջ. ֆարմակոլոգիկ պրեպարատներ, սիֆիլիսի խիմիո-թերապիան, սիֆիլիսի հիգիենան և դիետետիկան:



III-րդ փափուկ շանկր

1. Էթիոլոգիա, վարակման պայմանները. փափուկ շանկրի կլինիկական պատկերը, դիագնոզը, պրոգնոզը և բուժումը.

IV-րդ կաշվի հիվանդություններ

1. Կաշվի հիստոլոգիան և ֆիզիոլոգիան.

2. Կաշվի հիվանդությունների ընդհանուր ախտանիշագրությունը և մորֆոլոգիան.

3. Կաշվի հիվանդությունների կապը ներքին գործարանների, նյարդային համակարգության հիվանդությունների հետ, նյութերի փոխանակման հետ.

4. Կերատոզներ, կաշվի պտուկների մասնակցությամբ.

5. Կերատոզներ առանց մասնակցության մազի պտուկների.

6. Կերատոզներ կաշվի ֆոլիկուլների մասնակցությամբ.

7. Մազերի և յեղունգների հիվանդությունները.

8. Ճարպային գեղձերի հիվանդությունները.

9. Դերմատոն նևրոզներ.

10. Կաշվի էկսուդատիվ հիվանդությունները.

11. Կաշվի միկրոպարազիտար բնույթի հիվանդությունները.

12. Կաշվի բջջային նոր գոյացումները. միկրոպարազիտար բնույթի

13. Կաշվի կենդանի պարազիտներից առաջացած բորբոքումները.

14. Կաշվի փոփոխությունները առաջացած բուսական պարազիտներից.

15. Կաշվի բշտիկային բորբոքումները, բարորակ ցանը բայց քերծվածքից վարակված է և գործնական պարապմունքներ, ուսանողները խմբակներով մասնակցում են հիվանդների ընդունելությանը բաժանմունքում, քերծերից պարապմունքները միջո-ցին, միշտ էլ ցուցադրվում են հիվանդներ, մուլյաժներ և նկարնե-րը վերջին անհրաժեշտ է կազմակերպել գրքային ցուցա-դրական թանգարան, կաշվի և վեներական հիվանդություն-ների կլինիկային կից թանգարան, որի մեջ և կենտրոնական սա-հանքի մասին, գլխավորապես դասախոսության համար, լեն ան-կյուն պարի ավելին ատել են:

Ներկա ակադեմիական տարում մեր կլինիկան արդեն ունի փոքրիկ թանգարան 50-ի չափ մուլյաժներով:

Մաշկա-բանական և վեներա-բանական դիսպանսերային աշխա-տանքն այն հիվանդություններն են, որոնք ունեն. առավելապես բազ-մաթիվ նշաններ և արդյունքի ցեղափոխման արդյունավետ խորհրդատվություն:

Թերթերի դասախոսությունները համընդհանուր կլինիկական հիվանդ-ների ցուցադրությամբ, ընդհանրապես չեն կարող ուսանող-ների հիշողության մեջ ամրացնել դասախոսությունների մի-ջոցին կարդացած կաշվի հիվանդությունների և սիֆիլիսի մեն-չև անգամ գլխավոր ձևերի կլինիկական պատկերի ամբողջ բազմազանությունը, այս հանգամանքը դարձնում անհրաժեշտ կլինիկական հիվանդների ցուցադրության և բանավոր նկա-րագրության հետ միասին, որ ուսանողներին այնպես այն



հիվանդության պատկերը պլաստիկ ձևով:

Այդ բոլորը ներկայումս լրացրած և հիմնովին անալ-ժեմ փոքրիկ թանգարան. ապագայում հիմքը դրված է զգալի-թյուն ունեցող թանգարանը հարստացնել կենդանի և կ'հարստացնենք մուլյաժներով, բազմաթիվ նկարներով և պատրաստուկներով. կաշվի և վեներական հիվանդությունների լավագույն հանդեսներից վերցրած /ժուռնալներից/:

Այս բոլորը ինչպես պետք է լինել աշխ. և դասական հա-մալսարանների փորձը, հանդիսանում են /կլինիկական հի-վանդներից հետո/ անփոխարինելի կաշվի և վեներական հիվանդությունների ընդունման և ցուցադրման համար:

Կլինիկական հիվանդները հանդիսանում են ընդհանուր նյութ, մինչդեռ մուլյաժները, նկարները և այլն, որոնք պետք են դրված կլինիկական թանգարանում, միշտ էլ կարող են օգտվել պարապող ուսանողները:

Գործնական աշխատանքների հիմնական նպատակն է սովորեցնել ուսանողներին տեսնել և ավելի լավ յուրացնել քերծերի և կրկնել սովորածը սրահում և յեր-բեմն նյութի վրա, ծանոթացնել բժշկական մանիպուլյացիա-ներին և հիվանդանոցում գործածվող դեղամիջոցների մեծ մասին, գործնականորեն ծանոթանալ կաշվի և վեներական հիվան-դությունների հիմնական ձևերի կլինիկային և յուրացնել կենդանի նյութի վրա ատենցին ձևակերպման կարգերը:

Գործնական աշխատանքները կատարվում են բաժանմ-

նում /դիսպանսերում/ յերեխի ընդունելությունը կատարվում է խմբակներով 8-10 հոգով շաբաթական 3 անգամ յերկուական ժամով:

Այդ ընդունելության միջոցին ուսանողները բացի գիտական բացատրության լսելուց, կատարում են և չափ կլինիկական աշխատանք միջնակարգ ներարկումներ, սրսկումներ, սովորում են ժամերկայթը, բնաքննությունը, կաթետերիզացիան և այլն:



# ՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ԹԵՐԱՊԵՎՏԻԿ ԿԼԻՆԻԿԱ

Դասավանդման գլխավորից ֆակուլտետային թերապեվտիկ կլինիկայի հիմնական խնդիրն է ուսուցանել ուսանողին կլինիկական մտածողություն, հիվանդանոցային դասախոսության և խմբակային պարապմունքների միջոցով թե պրակտիկայում և թե առանձին հիվանդների վրա դիտելիքների ընկալվածության և նրա մասին աշխատակիցների - ասիստենտների և օրդինատորների աջակցությամբ:

Ֆակուլտետային թերապեվտիկ կլինիկայում դասավանդումը 1928-29 ուս. տարում բաղկացած պիտի լինի 1. սիստեմատիկ կարդացվող դասախոսություններից, 2. ուսանողների գործնական աշխատանքներից -- հսկայի հիվանդի անկողնու մոտ, 3. հիվանդների հանձնումը դասախոսությունների ընթացքում, 4. յերեկոյան շրջումներից /обход/, 5. ամբուլատոր ընդունելություններից, 6. լաբորատորական աշխատանքներից և 7. սեմինարական պարապմունքներից:

Դասախոսություններ կարդացվում են շաբաթական յերկու անգամ, յերկուական ժամ և մեկ անգամ մի ժամ:

Դասախոսությունների նյութը կազմում են, մեկ ներածական դասախոսություն, դասախոսություններ ներքին պաթոլոգիայի կանոնային բաժիններից, որոնց կցվում են գլխավորապես ուսանողների կողմից կուրացիայի յենթարկված հիվանդների ցուցադրումներ և այսպես կոչված «սեմ-

նարականներ: Այդ դասախոսություններին, բացի հիվանդների սովորական ցուցադրումներից, ուսանողական խմբերը պարտավոր են հանձնել իրենց ուսումնասիրած հիվանդներին, լրացնել նրանց մանրամասն անամնեզը, St. praesens, հիվանդության ընթացքը, դեպքի առանձնահատկությունները, դիֆֆերենցիալ դիագնոզը և բուժումը:

Դասախոսությունները ըստ հնարավորության վարվում են իրենց ուսանողների ակտիվ մասնակցությամբ, գոնե դասախոսության առաջին կեսում, իսկ դասախոսության 2-րդ կեսը նվիրվում է դեպքի անալիզին ու սինթեզին, ըստ հնարավորության այնպիսի ձևով, որ ուսանողին տրվի կլինիկական մտածողության նմուշ և թեորետիկորեն հիմնավորվի վերլուծվող դեպքը:

Հիվանդի կուրացիան կատարվում է 2-3 հոգուց կազմված փոքրիկ խմբերով և պիտի տևի ոչ պակաս 8-10 օր, որի ընթացքում ուսանողները պիտի հաճախեն կլինիկա և աշխատեն ամենքը 2 ժամից ոչ պակաս օրական:

Այդպիսի կուրացիաներ լինում են /վորպես պարտավորեցուցիչ/ յուրաքանչյուր սեմեստրում յերկուսից ոչ պակաս:

Ուսանողը պարտավոր է հավաքել անամնեզ, St. praesens, կատարել բոլոր անհրաժեշտ կլինիկական անալիզները, հետևել հիվանդության և բուժման ընթացքին ոչ միայն կուրացիայի ժամանակ, այլ և հիվանդը հանձնելուց հետո



մինչև նրա դուրս գրվելը կլինիկայից, իսկ հետո ասիստենտի և օրդինատորի հետ ունեցած մի շարք զրույցներից պետք է պարզի տվյալ դեպքի առանձնահատկությունները և հետաքերի հիվանդին ճիշտ մոտենալու և ճիշտ դիագնոզ դնելու կարողություն: Այդ զրույցները և դասախոսությունների ժամանակ կատարված վերլուծումները պիտի տարվեն այնպես, որ զարթեցնեն ուսանողի միտքը և սովորեցնեն նրան ինքնուրույնության, օգտվելով նախորդ կուրսերում ցեռք բերված գիտելիքներից և հիվանդի քննությունից ստացած տվյալները վերլուծելու և համադրելու կարողություններ:

Ամբողջ խումբը հիվանդը հանձնելիս տալիս է հիվանդության մի ընդհանուր նկարագիր, իսկ ամեն մի ուսանողը առանձին ներկայացնում է մանրամասն տարբերական դիագնոզ:

Այդ կուրացիաները, ուր ուսանողը ընդհուպ մոտենում է մի ամբողջ սերիա հիվանդների իրենց կենդանի պաթոլոգիական յերևույթներով և անհատական առանձնահատկություններով, յերբ նա ակտիվ մասնակցում է տվյալ դեպքի ուսումնասիրության և մինչև անգամ դեպքին համապատասխանող թերապիայի ընտրության-կլինիկական ասիստենտների և օրդինատորների ղեկավարությամբ - մեր կարծիքով պետք է լինեն գործնական աշխատանքի ծանրության կենտրոնը և ուսանողի բժշկական կրթության գլխավոր հիմնակը Ֆակուլտետթերապևտիկ կլինիկայում:

Որոշ է կազմակերպել յուրահատուկ չրջանակումներ /со-ходы/ ուսանողների համար պարտավորեցուցիչ, յուրաքանչյուրի համար ամեն մի սեմեստրում 5 անգամից ոչ պակաս:

Ընդունելով, որ վերջիններս էլ կարող գոյություն ունենալ առանց սեփական ամբիոնային ընդունելության անհրաժեշտ է ամեն ջանք գործադրել կազմակերպելու այդպիսին ներկա ուսմ. տարում:

Յուրաքանչյուր ուսանող պարտավոր է այցելել ամբիոնային ընդունելությունը յուրաքանչյուր սեմեստրում մի շարք, իսկ սեփական ամբիոնայինի ունենալու դեպքում, էլ ավելի:

Ուսանողների հետ ամբիոնային ընդունելությունը կատարում է կլինիկայի դիրեկտորը և նրա ասիստենտը:

Կուրսային աշխատանքում ուսանողը պարապում է լաբորատորիայում գլխավորապես լաբորատորական տեխնիկայից և կուրսային յուրաքանչյուր հիվանդի լաբորատոր ամբողջական 2 որ: Բայց այս ընթացիկ աշխատանքից դուրս պարտավորեցուցիչ չենք մնում, այլ գործնական բնույթ կրող սեմինար պարապմունքներ և 1928-29 ուսմ տարում, անպայման նման ամբողջ կուրսի համար: Այս միանգամայն ոգևորիչ պարապմունքները ուսանողների ամենա սերտ մասնակցությամբ -ինչպես ցույց տվեց անցյալ տարիների փորձը-զգալիորեն բարձրացնում է ուսանողի հետաքրքրու-



թյունը դեպի գիտությունը, զարգացնում է նրա ինքնուրույնությունը, սովորեցնում է նրան ավելի սիստեմատիկ աշխատանքի և այդպիսով բարձրացնում է նրա գիտության մակարդակը:

Նշված ծրագրի հաջող կիրառման համար պահանջվում է որ ուսանողները բավարար չափով պատրաստված լինեն առաջին 3 կուրսերի առարկաներից և նմանապես պետք յուրացրած չափով մասնագիտական դասագրքերով և դասական աշխատություններով: Նմանապես անհրաժեշտ է լավացնել կաֆեդրայի նյութական դրությունը և մեծացնել նրա շտատը: Անցյալ տարիներ նման ընդ հնարավորություն պետք կազմակերպել մասնավոր կուրսեր, բիոլոգիական տեխնիկայից և որոշ նոր մեթոդ-ից ընդ հնարավոր նույնպես և գործնական պարապմունքներ բիոքիմիայից:

22764

2017

ՀՀ Ազգային գրադարան
NL0056833